

15-34

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ՓԵԱՏԵՆԻ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ՓՇԱՏԵՆԻ

---

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ  
19. ԵՐԵՎԱՆ. 54

М. МАРКАРЯН

**СТИХИ**

(На армянском языке)

Айпетрат, Ереван, 1954 г.

ԶՐՈՒՅՑ  
ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԵՏ

## Ե Ր Գ Ը

Զանգուն խփում է ափերին,  
Խփում է նա ու խշխշում.  
Այգիների համար քնած  
Անքուն սիրս երգ է հյուսում.

Մերթ կանգնում է, կանգնած մնում.  
Մերթ պտույտ է տալիս տեղում,  
Մերթ փրփրած ծառս է լինում,  
Հորդում է սղջն ու հեղեղում.

Հասկանում եմ քեզ, իմ Զանգնւ,  
Սոսք չես գտնում երգիդ հարմար,  
Սրտում շատ կա, քան թե հանդում  
Ու խփում ես քեզ քարեքար:

Ուզում ես դու ամբողջ ուժով  
Մեծ աշխարհին սիրտդ բանալ,  
Եվ ուզում ես, և ուզում ես,  
Որ քարն անգամ քեզ հասկանա:

\* \* \*

Փարվել էս դու շիկնամ հողին,  
Փոքրիկ ողկույզ իմ խաղողի.  
Տերևներ ես վրագ քաշել  
Իբր դու չես, իբր չկաս.  
Իբր այդպես համարեք թե  
Մի ողկույզ է կյանքին պակաս.  
Բայց որքան էլ խոր թաքնվես՝  
Ձեռքը մարդու գտնում է քեզ  
Եվ դնում է արևի տակ  
Հիացմունքով պարզ ու շիտակ.

Ա՛խ, մարդկանց էլ թե փնտրելին  
Ստվերներում թաքնված խոր՝  
Կլիճներն գուցե ոմանք  
Ավելի թանկ ու բախտավոր.

## ԻՄ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Եթե մի օր ես դառնայի  
Տասնութ-քսան տարեկան,  
Ու փնտրեի ես կարստով  
Նորից ընկեր-բարեկամ,  
Կգտնեի նորից ես ձեզ,  
Կգառնայի ձեզ ընկեր,  
Սիրտս նետած ձեր ճամփեքին  
Կկիսեի կյանք ու սեր,  
Հուզումներով ջերմ ու խորին  
Աղմուկներով իմ եռուն,  
Կքայլեի ձեզ հետ մեկտեղ  
Դեպի կյանքի ջինջ հեռուն,  
Կվիճեի ճամփին հաճախ,  
Ձէի զիջի ոչ մի բան,  
Մեկ ծիծաղով արցունքաշաղ,  
Մեկ աղմուկով սրտավառ,  
Կկռվեի հաճախ ձեզ հետ,  
Սխալվել եմ, կասեի,  
Կափսոսայի ես նեղսրտած,  
Կորամ կյանքս, կասեի,

Ու թե նորից ես գառնայի  
Տասնութ-քսան տարեկան,  
Թե ընտրեի կյանքիս համար  
Նորից ընկեր-բարեկամ,  
Նորից ես ձեզ կդանեի  
Հարազատներ թանկագին,  
Դուք աղմկատ և հուզաշատ  
Ու դեկիցներ իմ կյանքի:

## ԾՆՆԻՒԱՎԱՅԻ

էն ուր բոյով  
Բարգիւներն են կանգնած պահակ,  
էն ուր ցածրիկ  
Փշատենին է գլխահակ,  
Ուր արևոտ գդումներն են  
կառուրներին կարգով շարած,  
Ուր սրտագին ոսկեվազն է  
Մայրագորով հողին փարած,  
Ուր ռնց շարժվես,  
Ուր էլ գնաս,  
Այգու մեջ ես գտնում գու քեզ,  
Ուր ռնց շարժվես,  
Ուր էլ գնաս  
Գտնում է քեզ արևը կեզ,  
Ուր սեզն այրող կրակի մեջ  
Սառնադրյուրն է շաղակրատում  
Եվ անցորդի համար հոգնած  
Բամին վերից թութ է թափում.  
Յածրակաուր,  
Համեստ ու յուր

Իմ հայրենի սունն է այնտեղ,  
Իմ մանկության ընկերների՝  
Ճնճղուկների բույնն է այնտեղ,  
Ու թե մի օր ես մոռանամ  
Մոր գրկի պես այդ հողը տաք,  
Ոչ մի լավ բան  
Դուք ինձանից  
Չսպասեք ու  
          համիտաք:

## Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Առաջ մայրիկն էիր միայն  
Սիրուն մայրիկն ու գիրկն իր սաք,  
Հետո տունն ու մեր բակը լայն,  
Հետո առուն աղմկաշատ:

Հետո դարձար դպրոցը մեր,  
Դարձար ակումբ, թաղ ու փողոց,  
Դարձար ճերմակ ինստիտուտներ,  
Պարտեզներ լի կանաչ շողով:

Դարձար ծաղկող գյուղ ու քաղաք,  
Դարձար անձիր հերկած հողեր,  
Գործարաններ բազմադաղակ,  
Իրքեր խորունկ, երգի տողեր:

Ու ճամփաներ դարձար երկար  
Հեռուների գիրկը վազող,  
Եվ այգիներ մրգով ներկած,  
Մարգեր դարձող ավաղ ու հող:

Հետո դարձար դու Երևան,  
Հասար մինչև Մոսկվա լուսե,  
Խոր ստեպաներ տրձակ ու լայն  
Անձայրած իր մեծ ու վսեմ:

Տաք իմ երկիր այրված ու շեկ,  
Այրված քարեր դուք իմ ծարավ,  
Տարածվեցիք աշխարհով մեկ  
Տարածվեցիք հյուսիս, հարավ:

Դու լեռներից իմ բարձրաբերձ  
Հեռուները հասար անհաս,  
Այդքան անհուն ու այդքան մեծ  
Իմ կյանքի մեջ մտար մաս-մաս:

Առաջ մայրիկն էիր միայն,  
Սիրուն մայրիկն ու գիրկն իր տաք  
Հիմա գարձեղ ես անսասման  
Բազմահնչյուն ու բազմերանգ,  
Բայց դու էլի մայրիկի պես,  
Մայրիկի պես սիրուն ու թանկ:

\* \* \*

Թողնեմ ես մի պահ իմ շոտյլ սերր  
Եվ անցուդարձը սղջ աշխարհի,  
Երգեմ մայրիկիս մաշված մասները.  
Հայտացքը հոգնած, դեմքը բարի:

Թողնեմ ես մի պահ իմ շոտյլ սերր,  
Ուրախ ցերեկը մեր փողոցի,  
Երգեմ հոգնած մոր անքուն գիշերը՝  
Չոքած առջևը օրսրոցի:

Եվ ամենօրյա լուռ այն հագսերը,  
Որոնց մանրունք են միշտ անվանում.  
Եվ որոնց համար վաստակողները  
Ոչ մի աստիճան չեն ստանում:

Որ անսկիզբ են, անվերջ են, անծայր.  
Անձե, աննկատ ու անանուն,  
Որով իր տան մեջ ամեն մի մայր  
Աշխարհն է ուսին տրած տանում:

Թողնեմ ես երգի բոլոր ձևերը.

Մարդկանց հույզերը, կոշուճն ու գերբ.

Թողնեմ արևն ու աշխարհը լայն.

Երգեմ մայր կոչվող

Անհատնում սերբ,

Ամենավերբ

Աշխարհում այն

## Չ Յ Ո Ւ Ն

Չյուն է գալիս  
Թեթև, թեթև,  
Մաքուր, ինչպես  
Մանկան երազ.  
Աստղ է դառնում  
Արծաթաթև  
Ու թափվում է,  
Թափվում վրաս:

Տես, ինչքան է  
Եկել, եկել,  
Ողջ աշխարհը  
Ճերմակ ներկել.  
Տես, ինչպես է  
Անափ դառել,  
Աշխարհը ողջ  
Գիրկը առել:

Բայց չի հանել  
Նա ոչ մի ձայն,

Նա ոչ մի ձայն,  
Ոչ մի շշուկ.  
Ու որքան ծառ  
Պիտի ծաղկի  
Որքան արտեր  
Կանաչաշուք,  
Որքան սերմ է  
Ծլում հիմա,  
Որքան կանաչ  
Տերև ու թուփ,  
Երեքնուկներ  
Քրոջ նման,  
Սրտամորմոք  
Ու սիրածուփ,  
Որքան հյութեղ  
Մրդեր հակինթ,  
Որքան անուշ  
Գոհար ու գինդ.

Ու չի հանի  
Նա ոչ մի ձայն,  
Նա ոչ մի ձայն,  
Ու մի շշուկ.  
Միշտ այդպես է.  
Այդպես է նա,  
Ծով բարիքներ  
Կտա հողին,  
Լուռ կհալչի  
Ու կղնա:





Փայլում է ձյունի փաթիլը փոքրիկ  
Մեղմ արևի տակ,  
Փայլում է ջրի կաթիլը փոքրիկ  
Մեղմ արևի տակ:

Թող կյանքդ լինի  
Ձյունի մի փաթիլ,  
Մաքուր, սպիտակ.  
Թող կյանքդ լինի  
Ջրի մի կաթիլ  
Հոսուն ու հստակ:

ՁԷ՞ որ այդ

կաթիլ-կաթիլներով է  
Իմ սիրագործով Ջանգուն հորդառատ.

ՁԸ՞ որ այդ

փաթիլ-փաթիլներով է  
Մասխի ճերմակ հրդեհք վառած.

## ԽՈՂ ՉԻՆՎՈՐԻ ՄԱՍԻՆ

Չգիտեմ դաժան պատմություններից,  
Թե զինվորով են շատ վախեցրել ինձ,  
Գիտեմ, որ փոքրուց, փոքրուց ահաբեկ՝  
Սարսափում էի ես զինվոր բառից:

Չինվոր ասելիս ես կարծում էի  
Ինչ-որ մարդակերպ մի կոշտ արարած.  
Անսիրտ, անհոգի, անդեմ, անանուն  
Ծանր սապոգներ ու շինել հագած:

Հետո մեծացա, մեծացա մի քիչ  
Իմացա ես, որ հայրեր են նրանք,  
Հայրեր են նրանք ու հորեղբայրներ  
Ծանր սապոգներ ու շինել հագած:

Հետո մեծացա, մեծացա մի քիչ  
Եվ իմացա, որ ընկեր են նրանք,  
Ընկեր են նրանք ու թանկ եղբայրներ  
Ծանր սապոգներ ու շինել հագած:

Տարիներ անցան տեսա կյանք ու գեներ  
Կյանքով իմացա, իմացա էլի,  
Որ բոլորս էլ զինվորներ ենք մենք  
Բայց առանց սապոզ, առանց շինելի:

## Գ Ա Ս Ր

Վարդի է նման փոքրիկ Նվարդը  
Նա նոր է հասել շորչորոց գոտարան,  
Այսօր դասն իրենց շատ խորն ու բարդ է,  
Այսօր դասը խիստ հույսել է նրան:

Բնկեր Արուսե ասել է, գրիր,  
Թե ինչ ես տառամ կյանքում ավելի,  
Նա էլ գրել է շատ պարզ ու լրիվ՝  
— Պատերազմը չար ու սարսափելի:

— Իսկ դու պատերազմ տեսել ես, Նվարդ,  
Պատմիր դու ինչ որ գիտես այդ մասին,  
Պատասխանել է Նվարդն անշտուպ,  
Այդ երկար ակտը ու ծանր գասին:

— Կյանքում պատերազմ ինքս չեմ տեսել,  
Պատմել այդ մասին ոչինչ չեմ կարող,  
Բայց իմ հայրիկին քույրիկս էլ, ես էլ  
Ճանաչում ենք լսել լուստնկարով:

Վարդի է նման փոքրիկ նվարդը,  
Նա նոր է հասել շորրորդ դասարան,  
Այսօր դասն իրենց շատ խորն ու բարդ է,  
Այսօր դասը խիստ հուզել է նրան:

\* \* \*

Այգի ունես թե կանաչած,  
Մոլախոտից հողն ազատիր.  
Թե դատավոր ես անաչտո,  
Օտարի պես որդուդ դատիր.

Որքան էլ լավ սերմեր ցանես,  
Վատ արժատներ դեռ կան հողում.  
Որքան էլ լավ գործը տանես  
Դեռ կա փորձանք ու ձախողում.

Քեզ են նայում հերոսների  
Շարքերն անմահ առած դարեր.  
Որ նեավել են կրակի մեջ  
Ու քեզ համար կյանք են վառել.

Որ մնացել են աշխարհում  
Որպես խղճի կշռաքարեր,  
Այգի ունես թե կանաչած  
Արժատներից վերջ տուր վատին.  
Թե դատավոր ես անաչտո  
Օտարի պես որդուդ դատիր.

## ԻՄ ՀԱՐԱՋԱՏՆԵՐ

### I

Ասել ամեն ինչ հարթ է ու դյուրին,  
Մեկ է, ինձ ոչ ոք չի հավատալու,  
Ասեմ բոլորը ժպտում են լռին,  
Մեկ է, ինձ ոչ ոք չի հավատալու:

Սառնել եմ հաճախ ես շարն ու բարին,  
Ինչպես բոլորդ, իմ հարազատներ,  
Ու ոտքս հաճախ կպել է քարին,  
Ինչպես բոլորիդ, իմ հարազատներ:

Հեշտ շեմ հասել ես այս ջինջ օրերին  
Այս իմաստախոր, այս լուսե դարին,  
Ինչպես բոլորդ, իմ հարազատներ:

Բայց երախտապարտ մնացածի պես,  
Ցավով եմ փակում ես ամեն տարին,  
Ինչպես բոլորդ, իմ հարազատներ:

Եի ուզում եմ ես ապրել անսխալ,  
Մնացած կյանքով անշեղ, անվրեպ,  
Վերջին ուժերս տամ իմ աշխարհին,  
Ինչպես բոլորդ, իմ հարազատներ:

Հաճախ այնպես հողնում եմ ես  
 Ու ծերանում ասես մեկեն,  
 Ու թվում է, շատ հեռվից եմ,  
 Անչափ հեռվից այստեղ եկել:

Ու թվում է, ուժերս ամեն  
 Թողել եմ ես ողջ իմ ճամփին,  
 Եվ անուժ եմ հասել այստեղ  
 Այս օրերին թարմ ու անպին:

Բայց մի մանկան ուրախ մի կանչ,  
 Մի ծաղկող ծառ, հատիկ ցորեն,  
 Գառնում եմ այլ ու անճանաչ  
 Ծնվում եմ ես ասես նորեն:

Ու չեմ կարող թեկուզ մի պահ,  
 Մնալ մենակ չորս պատի մեջ,  
 Երբ հիշում եմ, որ աշխարհն այս,  
 Իմն է անափ, իմն է անվերջ:

Եվ ուզում եմ բացվեն բոլոր  
Փեղկ ու տանիք, դուռ ու պատեր,  
Ու կանչեմ ես աշխարհով մեկ՝

Ես չեմ փոխվի,  
Ձեմ ծերանա,  
Ես չեմ հոգնի, հարազատներ:



Աչքի են ընկնում ճերմակ թելերը,  
կյանք իմ փոթորկուն ու սրտաբուխ.  
Ձէ որ լոկ երեկ, միայն երեկ էր  
Դեռատի կիր թեթև ու թուխ:

Ու ցավ չէ այնքան, որ արդեն թեքել  
Ու կարճանում է կյանքի ուղին,  
Ցավ է, որ նոր ես դու խելքի եկել  
Եվ հազիվ ես դու քայլում ուղիդ:

Ցավ է, որ կյանքը քանի դալիք է  
Ոչ գին գիտես, ոչ կշիռ ու չափ.  
Երբ ճանաչում ես քո անելիքը  
Հոգնած ես արդեն և ուժաթափ:

Եվ մնացած քիչ այս թանկ օրերին  
Նախատում ես քեզ ինքդ հիմա,  
Որ օրերն անգին քամուն ես ավել  
Հատիկ չունեցող հարգի նման:

Եվ ուզում ես դու գոռալ ու կանչել,  
Հասկացնել բոլոր ջահելներին,  
Բայց գիտես նրանք չեն հասկանա քեզ,  
Քանի չեն հասել այս օրերին.

## ԱՌԱՋԻՆ ԲԱՐԵԿԱՄԻՍ

Ինչ որ գրում ես միշտ այն չէ կարծես,  
Միշտ քիչ է անչափ սրտում եղածից.  
Հոգուդ կրակը հրկիզում է քեզ,  
Երգի մեջ փոքրիկ կայծեր են հազիվ:

Նայում ես կյանքին, նայում ես երգին,  
Ու երգը կյանքից այնքան է աղքատ.  
Ամենահարուստ երգը պոետի  
Իր հոգու համար թարգմանիչ է վատ:

Բայց դու, ընթերցող, ջերմ ու երգասեր,  
Կհասկանաս և փոքր այս կրակից,  
Թե ինչեր եմ ես ուզում քեզ ասել,  
Թե ինչու այդքան հարազատ ես ինձ:

Ձէ որ չեմ կարող շհաղորդել քեզ՝  
Ցերեկն իմ դժվար, գիշերն իմ անքուն,  
Թե բանաստեղծ եմ, թե երգիչ եմ ես,  
Դու իմ առաջին ընկերն ես կյանքում:



Փնտրում ես դու,  
Փնտրում ես դու,  
Որսնում ես կարոտակեց,  
Հետաձգում ես կյանքը քո,  
Խոստումներ ես տալիս դու քեզ:

Դժգոհում ես միշտ այսօրից,  
Հույս ես դնում վաղվա վրա,  
Գոտեպնդում ես քեզ նորից,  
Բորբոքում ես նորից կրակ:  
Ինչ ստեղծել ես դու կյանքում,  
Համարում ես չնչին ու վատ,  
Համարում ես քեզ անարժան  
Օրերին այս աղմկաշատ,  
Ու պահանջում ես դու քեզանից  
Տալ աշխարհին շատ ավելին,  
Աչքդ հառում ես կարոտով  
Միշտ ամենից բարձր ու վերին.  
Չանք ես թափում գիշեր-ցերեկ,  
Առանց քո շուրջը նայելու.

Առանց օրերն ափսոսարու,  
Առանց ոչինչ խնայելու,  
Ու նորից վեր, ու նորից վեր,  
Նորից իղձեր ու երազանք,  
Ու ամեն օր նոր իղձերով,  
Նոր կարոտով սկսվող կյանք,  
Բայց ո՞ւմ գիմես, ո՞ւմ բողոքես,  
Եվ ի՞նչ ասես ժամանակին,  
Որ անտարբեր, հանդիստ ու պաղ,  
Ձյուն է մաղում քո կրակին,  
Թեև միշտ կա իղձը մարդու  
Անափ, անհուն ու անհատակ,  
Եվ կրակն այդ մարդու հողու՝  
Այրվում է և ձյուների տակ:

## Խ Ո Հ

Աշնան այգու կատարներն են  
Ասես հեռվից դեղնին պալիս,  
Աշնան առվի երգ հիշեցնող  
Ինչ-որ թախծոտ ձայն է գալիս:

Բայց ոչ, շոգից հալչող ամառ,  
Չես հեռանա դատարկ ու լուռ,  
Կյանք եմ դրել ես քեզ համար  
Ու չեմ թողնի անցնես իզուր:

Բարիք սիտի տա աշխարհին  
Ամեն տողն իմ այրվող երգի,  
Մեր ոչ մի թիզ հողի վրա  
Չկան աշուն առանց բերքի:

## Հ Ո Ւ Շ Ե Ր

Նստած եմ մենակ  
խաղաղ հարկին տակ.  
Հարազատներին եմ լուռ հիշում.  
Կրակի վրա թեյամանը տաք  
Ինչ-որ մտերիմ երգ է խղճում.

Եվ հիշեցնում է խուլ խրճիթը մեր  
Գյուղի հեռավոր մի ծայրամասում  
Նստած է նանը ճախարակի տակ  
Արտասովում է լուռ ու երգ է ասում.

Մերթ նստում է նա ասեղը ձեռքին  
Ծակում է մամներն ու տճապարում.  
Քանդելով հորս շապիկը վերջին  
Եղբորս համար բլուզ է կարում.

Մերթ ծունկի եկած օջախի առաջ  
Սկերով պատած կորչում է ծխում  
Բորբոքում է լուռ կրակը վառած  
Եղբորս համար բլիթ է թխում.

Դե, ես աղջիկ եմ,  
յուրա կգնամ.

Նա է կարևոր՝  
տան միակ սյուներ,

Մեծ նանի ավազ  
տղայի տղան,

Մեծ նանի ավազ  
ուրախությունը.

Խեղճ ավազ տղա կորած սլարտքերում,  
Խեղճ իմ նան վերջին արցունքը քամած  
Վշտանում եմ, ես այրվում եմ հիմա,  
Որ ապրուստն այսքան հեշտ է ինձ համար,

Որ ապրում եմ ես արձակ սլալատում  
Գալիքի բոլոր բարձունքներն իմ դեմ,  
Որ այդ սմենը պատրաստել եք դուք  
Եվ դուք այդ մասին ոչինչ չգիտեք.

Նստած եմ մենակ  
խաղաղ հարկիս տակ  
Հարազատներիս եմ լուռ հիշում,  
Կրակի վրա թեյամանը տաք  
Ինչ-որ մտերիմ երգ է լսշում.

## Բ Ն Ա Ն Կ Ա Ր

Իմ սրտին հայոց քարտեզի վրա  
Ամենամոտը մեր գյուղի կետն է,  
Իսկ նրան կիսող գիծն օլոր՝ մոլոր  
Իմ աղմկարար «Ղրուչայ» գետն է.

Կես կիլոմետր ափից մինչև ափ  
Մեջտեղում ցամաք մի բարակ առու.  
Արևն է այստեղ ամենից շոայլ՝  
Գիրկն է առնում ողջ ու անսիրտ վառում.

Ծանր դեղձերով կախված ճյուղի տակ  
Հենակ է խփում այգեգործ Գևոն,  
Կանգնել է դեմը մի փոշոտ աղջիկ  
Կարմրած քիթը սրբում է թևով.

Ներքև մեծ նանը լվացք է փռել  
Լողացնում է թուխ խումբը թոռների.  
Կողքից անցնում է մի փոքրիկ իշուկ  
Ոտքերը ծռած ահավոր բեռից.

Չորի մոտ չափից սվել բեռնված  
Շրջվել է սայլը խոտի դեզն ուսին,  
Շվար նստել է աղետի առաջ,  
Չիբուխ է քաշում սայլասպան Մոսին:

Հին հարագատներ դուք իմ տխրաշուք,  
Աշխարհը արդեն ուրիշ է դառել,  
Ձեր սրտամորմոք իեղճությամբ եք դուք  
Մեծ երազներն իմ սրտի մեջ վառել:

## ՄՈՍԿՎԱ ԳՆԱՄ

Օրորում է մայրը որդուն՝  
— Շուտ մեծացիր, Մոսկվա գնամ.  
Մանուկներն են ապա երգում՝  
— Մեծ եմ արդեն, Մոսկվա գնամ.  
Բանվոր տղան մեր նորարար՝  
— Գյուտս անեմ, Մոսկվա գնամ,  
Կոլխոզնիկը սերմերն առած՝  
— Արտս ցանեմ, Մոսկվա գնամ.  
Եվ տարիքոտ մի ինժեներ՝  
— Ուշ չէ քանի, Մոսկվա գնամ.  
Գիտնական մի հոգնած ու ծեր  
— Վերջին անգամ Մոսկվա գնամ.  
Ու աշխարհի ամեն ծայրից,  
Որպես լույսի արևի տենչ,  
Որպես անհուն կարոտի կանչ,  
Մոսկվա գնամ, Մոսկվա գնամ.

Բայց դու գիտես, աշխարհը ողջ  
Զի կարող գալ ու քեզ հասնել.  
Դու ես գալիս մեզ ընդառաջ,

Լցվում է մեր տուն ու կյանքը մեր,  
Եվ գալիս ես, որքան գալիս,  
Այնքան նոր տենչ, իղձ ես տալիս,  
Այնքան անթիվ ճամփա բացող,  
Այնքան զորեղ ու սլացող,  
Այնքան սլայձառ, այնքան խորին,  
Երջանկությունը բոլորի:

## ԽՈՍՔ ԵՐԱԽՏԻՔԻ

(Իմ աշխարհին)

Ում լինեմ ես շնորհակալ,  
Այս լավ, այս մեծ բախտի համար.  
Այս լուս, խաղաղ լուսաբացի,  
Այս գաշտերի անծայրածիր,  
Այս վեր ելնող հայրենի տան,  
Այս տնհատնում հարստության  
Ողջ մարդկության ու գարերի  
Երագներից ասես քամած,  
Ում լինեմ ես շնորհակալ  
Այս լավ, այս մեծ բախտի համար,  
Որ ծնվել եմ ես այս հողում՝  
Այս աշխարհում արևամերձ,  
Որ ծնվել եմ օրերին այն  
Սրահալած ու հողմածեծ.  
Որ ծնվել է Հոկտեմբերը,  
Հոկտեմբերը մեր փրկարար  
Հալիլ-ձուլել մեզ էլ իր հետ  
Ու գարձրել մաքուր ու մեծ.

Որ ծնվել է Իլլիչն անգին  
Ու անհնար գործ է արել,  
Որ առաջնորդը իմաստուն,  
Նախնիների բարիքն առել,  
Հավաքել է իր ասիի մեջ  
Բազմապատկել հոգար անգամ,  
Որ վառել է ողջ աշխարհի  
Օջախները բոլոր հանգամ,  
Լցրել կյանքով շեներն ամեն  
Կիսախարխուլ ու խոշտանգամ:

Որ այրվում է աշխարհն ամբողջ  
Մեծ վերելքի հրդեհներով,  
Ու հասնում է ցոլքը նրա  
Պաղ բևեռից մինչև բևեռ,  
Որ փարվել են ծով ու գետեր  
Կոմունիզմը աշխարհ բերող,  
Որ գետերին այդ ընդառաջ  
Օվկիանոսներ են զալու դեռ:  
Որ այս երկրին, այս աշխարհին,  
Օրերին այս սրտանվեր  
Տաք երգեր եմ ձոնում ես էլ  
Միրուց այրվող, սիրուց քամած,  
Որ իմ ելնող լուսե ճամփին  
Կանգնել ես դու ամենից վեր,  
Ում լինեմ ես շնորհակալ  
Այս լավ, այս մեծ բախտի համար:

ԵՐԳ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ

## ԽՈՂ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ

Ասում են սերը մասնավոր բան է,  
Կարևոր չէ, թե ով ում է սիրում,  
Ասում են սերը թող մնա տանը,  
Սիրո երգերը սրտում են գրում:

Մխալ է՝ սերն այդ առաջին չափն է—  
Թե քո աշխարհին ինչպես ես նայում,  
Սրտի ու երկրի առաջին կապն է՝  
Թե աշխարհում քեզ ի՞նչն է հմայում:

Եվ իզուր են այդ խոսքն արտաբերում,  
Անձնականը մեր աշխարհն է արար,  
Ինչ որ սիրում ենք մենք այդ աշխարհում  
Մեր նեղ սիրո մեջ հորդում է վարար:

Ասում են սերը մասնավոր բան է,  
Սիրո երգերը սրտում են գրում,  
Քո պատկերն է իմ հոգում ու տանը,  
Ես քեզնով լցված աշխարհն եմ սիրում:

\* \* \*

Աշուն է պաղ, ծաղկել ես դու,  
Ինչո՞ւ համար, իմ բալենի,  
Սպասեցի գարնանն այնքան,  
Որ մի հատչիկ ծաղիկ լինի,  
Սպասեցի գարնանն այնքան,  
Որ մի ճերմակ թերթիկ լինի:

Հիմա շուայլ բացել ես դու  
Ծաղիկներդ ձյունից մաքուր,  
Հիմա շուայլ փռել ես դու  
Ճերմակ հրդեհ ու ճերմակ հուր:

Կանգնել ես դու ձմռան շրթին  
Կարոտներով ու կյանքով լի,  
Աշուն է պաղ, ծաղկել ես դու,  
Ինչո՞ւ համար, իմ բալենի:

## ՍԻՐՈ ՃԱՄՓԱՆ

Աղջիկ էի ես դեռահաս  
կյանքը գարուն, կյանքը երազ,  
Ուզում էի, որ ընկերս  
Հավ աչքերով տղա լինի:

Հետո անչափ ցանկացա ես,  
Որ լավ երգի ու լավ պարի,  
Հետո անչափ ցանկացա ես,  
Ինստիտուտում լավ սովորի,  
Վատ քննություն տալու նման  
Վարկարեկող չկա չարիք.  
Ո՞նց երազես, տենչաս մեկին,  
Որը երկուս է ստացել,  
Որը վախով իր հոգու մեջ  
Դասախոսից թաք է կացել  
Ուզում էի, ընկեր, վարիչ  
Անվերջ նրան գովաբանեն,  
Ուզում էի աղջիկները,  
Աղջիկները մեր հավանեն.  
Մեկն ու մեկը որ նրանցից

Հանկարծ քիթը վեր չքաշի  
Հանկարծ մի օր մի չհավան,  
Սիրտ պղտորող մի բառ չասի,  
Հետո անշուշտ, ծնողներս,  
Այդ հարցերում ամենազեա,  
Հանկարծ մի բան չհնարեն,  
Չասեն. չզաս էլ նրա հետ,  
Հիմա չկան ծնողներս,  
Ուսուցիչներս են ծերացել,  
Գնացել են աղջիկները,  
Իրենց բախտի դուռն են բացել,  
Հիմա ուզում եմ ընկերս  
Փոխարինի այն բոլորին,  
Հիմա ուզում եմ նա լինի  
Կյանքի նման ծանր ու խորին,  
Հիմա ուզում եմ նա լինի  
Աշխատասեր, ազնիվ, բարի,  
Հիմա ուզում եմ նա լինի  
Սիրելիին իմ ողջ աշխարհի.

## ԵՐԳ ԱՆՎԱՆ ՄԱՍԻՆ

### 1

Առաջ անուն էիր սովոր՝  
Մի քանի վանկ, մի պարզ անուն.  
Հիմա կյանք ես դու բարդ ու խոր  
Բազմաշավիղ ու բազմահուն.

Քեզնից առաջ էլ կյանքը կար  
Հմայքներով իր բազմերանդ,  
Բայց քեզանով դարձել է նա  
Ավելի խոր, ավելի թանկ.

Իմաստնացել է ամեն ինչ  
Դարձել մտաիկ ու հարազատ.  
Աշխարհն ասես տվել են ինձ  
Բարիքներով բազմահազար.

Ու նստում եմ հաճախ մենակ,  
Նստում եմ ու միտք եմ անում՝  
Թե ինչպես է մի անունով  
Կյանքը այսօրան հարստանում.

Այնքան լավ է իմ անունը,  
 Երբ որ դու ես արտասանում.  
 Այնքան լավ է փոքր իմ տունը,  
 Երբ որ դու ես դուռս բանում.

Հարկավոր չեն ինձ սլաշատներ  
 Ու ներբողներ սիրածարավ.  
 Կոչումներ մեծ անհաս ու վեր  
 Ու վայելքներ հորդ ու վարար.

Փառք չեմ ուզում ես իմ դարից,  
 Գովքեր իմ շուրջն ու իմ մասին.  
 Ես կյանքս տամ իմ աշխարհին  
 Քեզ հետ մեկտեղ ու միասին.

## ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ

Որոճում է քամին ասես ինչ-որ մեկին,  
Ներս է խուժում, դուռ-պատուհան  
ջարդում է նա.

Բարդիները խշխշալով գլուխ թեքել,  
Համոզում են, համոզում են, որ հետ գնա:

Հավաքվել են ճնճողուկները գյուղի ճամփին,  
Ու շարվել են հեռադրատան թելի վրա,  
Աչք են դրել վեր բարձրացող մռայլ ամպին,  
Համոզում են, համոզում են, որ հետ գնա:

Կարմիր կոկոնն արթնանում է  
դեղձենու պաղ ճյուղի վրա,  
Դեպի նա են թեքվում բարակ ճյուղերն ուրիշ,  
Շշնջում են, որ ցուրտ է դեռ,  
որ բացվելը անօգուտ է ու անհնար,  
Համոզում են, համոզում են, որ հետ գնա:

Լեռան տակից աչք է բացում արևն արդեն,  
Ու հազիվ է դեռ երևում շողքը նրա,

Դիզվում են ամպ ու մառախուղ մոայլադեմ  
Համոզում են, համոզում են, որ հետ պնա:

Հրկիզում է սիրաս անտես կարոտ մի խոր,  
Բարձրանում է հոգու խորքից

մի ջերմ ու թանկ դիմանկար,  
Հայտնվում են չար քամու պես սառը խոհեր  
Համոզում են, համոզում են, որ հետ պնա:

\* \* \*

Լավ են մարդիկ իմ աշխարհում,  
Դու ինձ համար առաջինը,  
Իմ ձյուներում ծաղկած գարուն  
Գուցե միակն ու վերջինը:

Ամենուրեք սիրա է եռում,  
Շատ գանձեր կան մոտ ու հեռու,  
Դու ամենից նորն իմ կյանքի  
Իմաստաթյան խորն ու ճինը:

Գիտես որքան եմ տառապել,  
Միտք ու երազ իրար կապել,  
Զևել, չափել, քրտինք թափել  
Ողջը տվել ուրիշներին  
Ու քեզ միայն, քեզ վաստակել,  
Դու ինձ համար շոայլ պարզե,  
Դու իմ դժվար կյանքի գինը:

\*  
\* \* \*

Դու երջանիկ ապրես կյանքում  
Հազար անգամ էլ ավելի,  
Բարեկամներ ունենաս դու  
Հազար անգամ էլ ավելի:

Կյանքդ հոսի փրփրադեզ  
Հաճույքներով, հույզերով լի.  
Հանդիպու մներ կարոտակեզ  
Հազար անգամ էլ ավելի:

Բայց թե մի օր քո լույս բախտին  
Քամի փչի պաղ, անսովոր.  
Թեկուզ մի սլահ մնաս մենակ,  
Վշտերի մեջ մնաս անքուն,  
Հիշեր, որ քո մեծ աշխարհի  
Ծայրամասում մի հեռավոր  
Ինչ-որ մեկի համար դու միշտ  
Անասելի թանկ ես կյանքում:

\*  
\* \* \*

Քամին ոռնում է մոլեգնած,  
Ձմեռ է, ցուրտ սառնամանիք.  
Ձույնակոլով, սառցակալած,  
Քարացել է դուռ ու տանիք:

Քայլում եմ ես ու սայթաքում  
Մայթերին պաղ ու անարև,  
Ու զարմահում, զարմանում, թե  
Ոնց է աշխարհն այգպես սառել:

Հայտնվում ես, բայց անա դու,  
Բարձրանում ես դեմից խաղաղ,  
Ու հալչում է, հալչում իսկույն  
Ողջ աշխարհի սառույցը պաղ:

Շուրջս այգի, ծաղկած ծառեր,  
Ծաղկած աշխարհ մի անեղերք,  
Շուրջս գարուն, շուրջս արև,  
Թիթեռ անթիվ, թռչունի երգ:

Տրորում եմ աչքերս ես,  
Երջանկության այրող փայլից,  
Ու գառնում է արեւը կեզ  
Քս մտակցող ամեն քայլից:

Բայց գնացիր, գնացիր դու,  
Կայր էր հողիդ, ինձ չտեսավ,  
Կամ իմ սրտի կրակն էր թայլ,  
Չառավ սրտիդ, քեզ չհասավ:

Քամին սոնում է մոլեգնած,  
Չմեռ է ցուրտ սառնամանիք:  
Ձյունակոյու սառցակալած  
Քարացեղ է դուռ ու տանիք:

\* \* \*

Իմ Մասիսի նման բարձր  
Ու մաքուր եւ դու իմ հոգում,  
Իմ Մասիսի նման հավերժ  
Ծանր ու լուռ ես դու իմ հոգում:

Մեկ է ինձնից մտաիկ-հետու,  
Անասպատում թե բեկոում,  
Ամեն վայրկյան կյանքն հաստատող  
Սրտի հար ես դու իմ հոգում:

Կյանքս առնեմ տաք ձեռքիս մեջ  
Շոտյլ-շոտյլ տամ աշխարհին:  
Սրտիս գանձերն անհուն, անվերջ  
Շոտյլ-շոտյլ տամ աշխարհին:

Միայն քեզ իմ սրտում պահեմ,  
Քեզ ոչ ոքի միայն չտամ,  
Այս մի հարցում ես անդիջող,  
Զարալեզու ու չարակամ:

Կյանքս տաք-տաք սամ աշխարհին,  
Հազար անգամ կրկնապատկեմ  
Ծով դարձնեմ բերք ու բարին  
Վաստակներով, բերքով, երգով:

Մի դար դառնա մեր մի տարին  
Ողջը մերսնց, սղջ մեր մարդկանց,  
Ողջը ծաղկող մեր աշխարհին,  
Ողջը տանեն ծեր ու ջահել,  
Մոտ, անծանոթ ու բարեկամ:

Միայն քեզ իմ սրտում պահեմ,  
Քեզ ոչ ոքի միայն չտամ:

## ԱՌԱՋԻՆ ՉՅՈՒՆԸ

Լուսաբաց էր մարմար,  
Թափվում էր թեթև առաջին ձյունը,  
Հողիս ուղեց հանկարծ  
Այդ անդորր պահին  
Տեսնել քո տունը:

Եվ անցա ես խաղաղ,  
Անցա ես խաղաղ ձեր փողոցով.  
Նիրհում էր աշխարհը պաղած,  
Լուռ էր ճերմակ  
մի ծով:

Եվ քո տան մուտքի մոտ  
Հեռվից դեռ,  
Տեսա ես քո ծանոթ քայլերը,  
Խառնված ուրիշի քայլի հետ,  
Իսկ շուրջը  
Մաքուր ու անդորր էր:

Եվ հետո աշխարհում այս,  
Որ անհուն ու անծիր է,

Նրբ տեսնում եմ ձյունին  
Քայլերի հետքեր կան,  
Թվում է ամեն տեղ  
Նրա հետ անցել ես  
Եվ աշխարհի սրտում  
Սրտիս պես վեր  
Վերքեր կան...



Թողած ես դրսի հոգաերն առօրյա,  
Հավաքում էի մի օր իմ տունը.  
Ու գտա գեղնած մի թղթի վրա  
Քո ձեռքով գրած իմ անունը.

Ահա մի սեղան պարզ ու հասարակ  
Ամենից հեռու անկյունում գրած.  
Չբացված վաղուց մի փոքրիկ դարակ  
Անցած թվերից մի հին թերթ փռած,  
Ու դեղնած-դեղնած մի թղթի վրա  
Քո ձեռքով գրած իմ անունը.

Եվ կյանքում այս մեծ, կյանքում այս հզոր  
Որտեղ փոխում են վոլպալի հունը,  
Ուր տանիքներն են դիպչում ամպերին  
Գծապրելով երկրի անհունը,  
Ուր մետրոներն են լուսե ճամփեքով  
Փռված խլրատում աշխարհի խորքում,  
Ուր փոքրիկ առուն գլխավում է ձոր,  
Եվ արևներ են բարձրանում ձորից,

Երբ այս բազմահուն, երբ այս բազմերանգ  
Աշխարհն է ամբողջ դարձել քո տունը:

Ինչո՞ւ է այսպես անասելի թանկ,  
Ինչո՞ւ է այսպես հոգիս փոթորկում,  
Այս դեղնած-դեղնած թղթի կտորից—  
Քո ձեռքով գրած իմ անունը:



Հողնած եմ.

Գուցե

Հողնած ես և դու,

Այսպես,

Մի փոքրիկ

Հուսամփոփի տակ

Նստած ես մենակ.

Եվ հիշում ես դու

Մանկան մի ժպիտ,

Մայրիկի մի դեմք

Լի գորովանքով,

Աղջկա մի ձայն

Արծաթահնչյուն

Եվ ծիծաղախիտ.

Հիշում ես մի խոր

Հայացք սրտազին,

Որ իշխում է լուռ

Հուշերիդ վրա,

Ու հայտնվում է

Կրկին ու կրկին  
Մի հայացք հեռու  
Ջերմ ու սրաագին,  
Հոգնած եմ,  
Գուցե  
Հոգնած ես և դու,  
Գուցե քո հեռվում  
Հուսաբաց է պարզ  
Իմ շուրջը հիմա  
Գիշեր է խորին,  
Եվ եկ մեր բոլոր  
Սիրելիների  
Խնդության համար  
Ու երջանկության  
Աշխատենք նորից:

\* \* \*

Կյանք ու սեր բառը ինձ համար մեկ է  
Թե սեր չկա, ես չկամ աշխարհում,  
Երկինքը կապույտ, արևը շեկ է,  
Արև չլինի, որտեղի՞ց գարուն:

Իմ սիրո համար երկմտանք չունեմ,  
Անբավ սիրուց է իմ տառապանքը,  
Միայն գիտենամ, որ սիրում են ինձ,  
Որ ես աշխարհին մի բանով թանկ եմ:

Որ ժպտալով են անունն իմ հիշում,  
Իմ իղձերն ամեն, ճիգերն ու ջանքը,  
Որ տարիներն իմ չեն անցել իզուր,  
Որ ինձնով մի բան շահել է կյանքը:



Ես սիրում եմ քեզ իմ աշխարհի հետ.  
Քեզ առանց նրան, նրան առանց քեզ  
Ես չեմ պատկերում.

Եվ այս մեծ, այս լայն աշխարհի վրա  
Ոչինչ առանց քեզ ու քո անունին  
Չեմ մտաբերում.

Դու ամենուր ես,

Ամեն ինչի մեջ,

Բոլոր խմբերում

Եվ ամեն վայրկյան ամեն մի քայլով,

Եվ ամեն խիզախ թռիչքի փայլով

Դու իմ աշխարհին,

Իմ աշխարհը քեզ բարիք է բերում.

Եվ աշխարհն այս մեծ, լայն ու ավեափ.

Որ քեզնով է լի,

Ես չեմ հասկանում դու նրան—սիվ ես,

Թե նա քեզանով այդքան սիրելի.

Եվ ձեզնից սրն է ավելի հմայք

Տվել իմ կյանքին,

Եվ ձեզնից սրն է ավելի անհաս,

Ավելի անգին.

Ու կարող եմ ես խորհել գեթ մի պահ  
Լոկ մեկիդ մտաին.

Դուք այնքան մեկ եք, դուք այնքան նման,  
Այնքան միասին.

Մի սիրտ մի, կյանքով, մի կերպարանքով,  
Միենույն գերում,

Ես քեզ սիրում եմ իմ աշխարհի հետ.  
Քեզ առանց նրան, նրան առանց քեզ  
Ես չեմ պատկերում.

## ԱՍՈՒՄ ԵՆ ԹԵ...

Ասում են թե կոկոնն է լավ,  
Բացված թերթը դալկանում է,  
Սիրո խոսքը երբ դուրս թռավ,  
Հույզի հմայքը տանում է.

Կրակի պես խոր անթեղած  
Այնքան խոսք է սիրաս վառել,  
Բայց երբ, ինչպե՞ս, ինչո՞ւ համար,  
Ո՞ւմ էին պետք շասած բառեր...



Ո՞ւմ ես որոնում այդպես մտահույզ,  
Ո՞վ է քո հոգու հանգիստը ապրելի,  
Ո՞վ է քո հոգու կսկիծը վառելի,  
Ո՞ւմ ես որոնում այդպես մտահույզ:

Ասի, ես գնամ որոնեմ նրան,  
Որոնեմ, գտնեմ, սիրտս տամ իրեն,  
Որ սիրաշաղախ այս հողի վրա,  
Քեզ ինձ պես միայն, իմ սրտով սիրեն:



Հիշեցի ես մի օր քեզ  
Ներած մեղքերդ բոլոր,  
Ա՛խ, տարիներ, տարիներ,  
Տարիներ հետո:

Անհետացել էր անաես  
Հոգուս վերքը ծանր ու խոր,  
Ա՛խ տարիներ, տարիներ,  
Տարիներ հետո:

Փոթորիկն այն մոլեգին  
Հոգուս էլ չի սպառնում,  
Ա՛խ տարիներ, տարիներ,  
Տարիներ հետո:

Տաք դառնությունն օրերի  
Պաղ քաղցրություն է դառնում,  
Ա՛խ տարիներ, տարիներ,  
Տարիներ հետո:

\*  
\* \*

Նորից հազնեմ սիրուն շորեր,  
Մայթեր չափեմ ջահելի պես,  
Հազնեմ կանաչ-կարմիր օրեր,  
Նվեր բերեմ գարունը քեզ:

Չհավատամ ինձ բամբասող  
Արագ վազող տարիներին,  
Չհավատամ սիրտ ախոսող  
Վշտերին ու կյանքի բռնին:

Եվ ընդմիջում, և ընդմիջում  
Մեծ ու փոքրիկ խնդիրներին,  
Անհող սիրուն մի օր զիջում,  
Մի օր կյանքը թող ինձ ների:

Նորից հազնեմ սիրուն շորեր,  
Մայթեր չափեմ ջահելի պես,  
Հազնեմ կանաչ-կարմիր օրեր,  
Նվեր բերեմ գարունը քեզ:

\*  
\* \*

Ասում են ինձ, որ ես շուտ եմ,  
Անչափ շուտ եմ հրապուրվում,  
Որ ես շուտ եմ փոքրիկ լավով  
Մինչև հոգուս խորքը տարվում.

Ա՛խ ես էլ եմ խորհելով պաղ՝  
Այս անիրավ սրտին ասում,  
Ախ, ես էլ եմ նրան հաճախ  
Թեթևների շարքը գասում.

Բայց մի օր էլ սիրտս ասաց.  
Խենթանում ես, երբ տեսնում ես  
Մի նոր փողոց, նոր ճանապարհ,  
Մի նոր կայան մի նոր կամուրջ.

Մի նոր շենքի զարդանկար,  
Փոթորկում ես հուզումներով,  
Թե ես առնում հպարտանում,  
Ամեն վայրկյան ինձ էլ քեզ հեռ  
Առնում ես ու գալիք տանում,  
Ա՛խարհը ողջ քո սուենն արած

Հազար մի փակ ես քանում  
Մի ցարենի հասկի համար  
Առաջ նետած քեզ մտանում.  
Ուզում ես սղջ քեզ նվիրել  
Ծաղկած այգուն ու խաղողին,  
Ուզում ես սղջ քեզ նվիրել  
Ելնող շենքին, քարին, հողին,  
Ինչպես հապա ես չսիրեմ  
Այս ամենը ստեղծողին.

\* \* \*

Սուտ կլինի, եթե ասեմ՝  
Բախտավոր եմ ես առանց քեզ,  
Սուտ կլինի, եթե ասեմ՝  
Մեկ է կյանքում կաս, թե չկաս:

Սուտ կլինի, եթե ասեմ  
Լող հողն ու ծառն եմ սիրում ես,  
Միևնույն է՝ թե այդ հողում՝  
Այդ ծառի տակ ո՞վ է պակաս:

Ձեզանով է, սիրելիներ,  
Երկիրն իմ լայն, երկիրն իմ մեծ  
Ձեզանով է ճամփեքը մեր  
Անծայրածիր ու բարձրաբերձ:

Ձեզանով է, սիրելիներ,  
Ձեզանով է մեր կյանքը կյանք,  
Ձեզանով է, սիրելիներ,  
Հայրենիքը հարուստ ու թանկ:

## ԱՄԱՌՆԱՄՈՒՏ

Քարունն իր խաղաղ ափերից ելել  
Ու դեմ է առել ամառվա շողին,  
Կպայթի սիրտս, թե երգ չգրեմ,  
Թե սիրո խոսքեր չասեմ ես մեկին:

Բնից դուրս թռչող ձագերի համար  
Ճնճողուն առաջին կեռասն է տանում:  
Աղջիկները չիթ դսգնոցների մեջ  
Ծաղկի կոկոններ ու բախտ են բանում:

Սոսուժմ են, վիճում, բամբասում իրար,  
Սրտի գաղտնիքներ փսփսում իրար,  
— Էս մեկը շեկ է, էն մեկելը սև,  
Հոնքերը թեք են ու խասյաթը խև...

— Երբ սիրտը լիքն է, սիրտն, աղջիկներ,  
Աչքը չի նայում սեխն ու շեկին,  
Կպայթի սիրտս, թե երգ չգրեմ,  
Թե սիրո խոսքեր չասեմ ես մեկին:

Լիպայք է փսսում սև տանտիրուհին  
Ամենասիրուն խալաթը հագին.  
Երգում է սրտանց շեկ շոֆեր տղեն  
Մի ձեռքն այտի տակ, մյուսը ղեկին.  
Կպայթի սիրտս, թե երգ չգրեմ,  
Թե սիրո խոսքեր չասեմ ես մեկին.

Դուրս է ելել մի տրակտորի շարան,  
Տղերքը անծիր դաշտերն են վարում.  
Որմնադիրները շաղախը առած  
Բնակելի տան սյուներն են շարում.

Պապիկները ծեր նստած պատի տակ  
Ղախճանին թեքվող կյանքն են ամսոսում.  
Հազիվ թոթովող մանուկները խած,  
Չհասկանալով գուցե ոչ մի բառ,  
Երջանկության բարդ երգեր են ասում.

Եվ այս ուշ դարնան տաք-տաք ճամփեքին.  
Եվ այս վաղ ամռան հանդեսին շքեղ,  
Ամառնամուտի այս պայծառ ծեղին,  
Մարդու բարևի ու ողջույնի տեղ  
Կպայթի սիրտս, թե երգ չգրեմ,  
Թե սիրո խոսքեր չասեմ ես մեկին.

\*  
\* \* \*

Ձեռ հասկանում, չեռ հասկանում,  
Երբ հասկանաս, ուշ կլինի,  
Կնայես դու սրտիդ խորքին՝  
Ափսոսանքի փուշ կլինի:

Ինչ որ այսօր թողիր վաղվան,  
Գնում է, որ կորչի անհետ.  
Ու չի դառնա ոչ մի գնով,  
Ոչ մի գնով չի դառնա ես:

Մի կորցնի ոչինչ այդպես  
Անհոգ, անփուլթ ու անտարբեր,  
Ինչ որ կյանք է կոչվում այսօր  
Վաղն անկրակ հուշ կլինի

Ձեռ հասկանում, չեռ հասկանում,  
Երբ հասկանաս, ուշ կլինի:

## ՄԵՐ ՍԵՐԸ

ԹՎԱՄ Է ՆԵՆՔ ԱԻՐԻԵԼ,  
ԹՎԱՄ Է ՆԵՆՔ ԿՐԵԼ,  
ԵՐԿԵՐ ՆԵՆՔ ԿՐԵԼ  
    ՄԵՆՔ ԱԻՐՈՒ ՄՈՍԻՆ.  
ՆՈՒՄԱԿ ՆԵՆՔ ՍՅՐԵԼ  
ՈՒ ԱԻՐՈՒ ՎՍՅՐԵԼ  
ՉԵՆՔ ԸՆՏԱՐԵԼ ՄԵՆՈՒԿ  
    ԹՈՒԼ ԴԻՍՍԻՆ.  
ԹՈՒՔՈՒՆ ՆՈՒՄՅՐՈՎ  
ՀՈՅԻՈՒՆ ՆՈՅԵԼ.  
ՉԵՆՔ ՆՈՒ ԿՎԵԼ, ՎԻՔՎՍԾ  
    ՎԻԻԻՍՈՎՈՅԵԼ.  
ՉԵՆՔ ՎԻՃԵԼ ԵՍՔ-ԵՍՔ  
    ՄԵՆՔ ԱԻՐՈՒ ՄՈՍԻՆ,  
ԱՍԵՍ ԿԱՐՈՒԹԻՅ  
    ՍՅՐՎՈՂ ՍՆՔԵՐՈՎ  
ՉԵՆՔ ԴՈՒՄԱՂՐՎԵԼ  
    ՍԿԱՄՄՈՒԹՅԱՆ ԿՈՍԻՆ,  
ՈՐՔԱՆ ՆՈՅՂԵՐ ԵՄ  
ՏԵՆՆՈՒՄ ԵՍ, ՈՐՔԱՆ,

Երբ կյանքի անգիր  
    իմ գիրքն և՛մ բացում,  
Բայց պայքարը թե՛ժ  
    հնոցի նման  
Հայել ձուլել է  
    ամեն զգացում,  
Մանկության եթեր,  
Ու սլափի թերթեր,  
Բարդ խնդիրներով  
    լցված դասարան,  
Նիստեր, քաղխմբակ,  
    շաբաթօրյակներ,  
Հետո ինստիտուտ  
    կամ համալսարան.  
Նախ կարմիր աստղիկ  
    ու կարմիր փողկապ,  
Հետո կի՛մ, սպորտ,  
Տո՛մս կոմսոմոլի,  
Անհատակ սրտեր  
    լցված ափեափ,  
Անհատակ սրտեր  
    երազներով լի.  
Ջահելություն մեր  
կրակ ու կարստ  
Ու ոտի վրա  
    վազվզող սերունդ.  
Հաշվետվություն  
Խիստ մեծ երի մոտ,

Ագիտացիա՝ խուլ  
Թաղամասերում.  
Ապա պատերազմ  
Տաք Արևելքում,  
Դիպլոմատիա կեղծ՝  
Փաստերի հերքում,  
Մութ արահետներ,  
Դիվանագետներ,  
Ու նենգություններ  
համաշխարհային.  
Ծեր դեերի մեջ  
Մի ջահել երկիր,  
Մի ջահել երկիր  
ջերմ մարդկային.  
Ու պայքար,  
պայքար,  
մարտնչող սուր կյանք.  
Եվ գոհեր,  
գոհեր,  
գոհեր ծանր ու թանկ.  
Մարդիկ մարդուց վեր  
ու անկրկնելի.  
Սիրո ճամփաներ  
կրակներով լի.  
Խասան,  
Խարխինգյու,  
մարտ Ֆինների հետ  
Հետո հաղթանակ, .

Նորից պատերազմ.  
Ռուսքեր ու կրակ  
    ու նորից աղետ.  
Ու նորից աղետ,  
Ու նորից արյուն,  
Նորից աջ ու ձախ  
Ռուսքի շարասյուն.  
Հերոսություններ,  
Հերոսություններ,  
    հերոսություններ,  
    հաղթանակ հղոր.  
Կառուցվող Երկիր,  
Քաղաքներ,  
    տներ  
    Ու հնգամյակներ  
    դարերի ու ժողի.  
Եվ երգեր,  
    երգեր,  
    երգեր տքնության.  
Պայքարի երգեր,  
    առաջընթացի.  
Թվում է ամեն ինչ,  
Ամեն ինչ անսանք  
    մեր սրտի խորքից,  
    մեր սիրույց բացի  
— Ինչ արած, կասենք,  
ժամանակ չկար  
Հոգնած, վաստակած,

Երբ դառնանք մենք տուն,  
Բայց չէ որ սեր է  
Մեր կյանքը համակ  
Այլովոչ անասի սեր  
Ու երջանկու թյուն:

ՄՐԳԱՇԱՏԻ ԿԱՐՈՏԸ

## ԺՈՂՈՎ ՄԱՍՐԵՆՈՒ ՏԱԿ

Ամենայն օր մաթն իջնելիս  
Լեռան վրա, մասրենու տակ,  
Հավաքվում են երկու հոգի  
Ժողով անում հույժ դոնփակ:

Թիկն է տալիս տղան քարին  
Կեռ եղանք թփում թողած,  
Քրթմնջում է աղջիկն անվերջ,  
Քննադատում է սրտնեղած:

Որ պլանը չի կատարում,  
Որ շատ ուշ է գալիս նիստի,  
Որ շատ վատ է ղեկավարում,  
Գործը սիրո սև հանգստի:

Ընդունում է տղան իսկույն,  
Թերություններն իրեն բոլոր,  
Խոստանում է ուղղել իրեն  
Եվ չուշանալ էլ ոչ մի օր:

Ու դիպվում են հարցեր, հարցեր,  
Դատեր շատ խիստ ու անխնա,  
Ո՞ւմ սիրունին, ո՞վ է դարձել,  
Վաղն ո՞վ պիտի քաղաք գնա:

Ո՞վ նեղ լծեց նախագահին,  
Ո՞վ շատ պարտքեր ունի տալու,  
Ո՞վ խոստումը պիտի պահի,  
Ումի՞ց գյուղին խեր չի գալու:

Մինչ աղջիկը գգույշ, կամաց,  
Մի նոր հարց է առաջ քաշում,  
Թե էլ քանի՞ նոր հարսանիք  
Պիտի լինի գալիք աշուն:

Տղան ասես խուսափում է,  
Շատ գործնական լուրջ հարցերից,  
Իսկ աղջիկը ամաչում է,  
Ամաչում է խոսել նորից:

Ու հաշվում է տղան մտքում  
Լավն ու վատը իրենց կյանքի,  
Հաշվում է տան պահասներն ու  
Հնարներն իր աշխատանքի:

Որոշում է իրենից շուտ  
Քույրիկներին ճամփու դնի,  
Որ մայրիկին ցավ չդառնա,  
Խոսք ու դրույց հետո չըլի:

Որ տունը լավ կարգի բերի,  
Ու տուն տանի նոր աղջկան,  
Իսկ այս աշուն, հոկտեմբերին  
Բնավ, բնավ հնար չկա:

Ու խոսում է տղան կրկին,  
Հեռու մտաիկ ընկերներից,  
Մեջտեղ բերում հարցերը հին,  
Խոսքի ճամփան ծուռ մ'նորից:

Սրտնեղում է աղջիկն անվերջ,  
Ժամանակն է իր ավստսում,—  
Գործնական չէ սիրած տղան,  
Թանկ օրեր են իգուր հոսում:

Որ գուր իրենք շատ են խոսում,  
Ինչպես մի շարք ժողովներում,  
Որ կարևոր հարցը թողած,  
Ուրիշ հարց են առաջ բերում:

Ամենայն օր մութն իջնելիս  
Լեռան վրա, մասրենու տակ  
Հավաքվում են երկու հոգի,  
Ժողով անում հույժ դռնփակ:

## ՍԻՐՈՒՆ ՍՈՆՅ.

Սիրով լիքն է սիրուն Սոնան  
Աշխատասեր ու բարի,  
Ու մայրիկն է սիրուն Սոնան  
Երկու պարթև տղայի:

Մեկի քիթն է հման հորը,  
Մեկի հոնքն ու աչքը թուխ,  
Մեկը զուսպ է, ծանր ու խորը  
Մեկն անհամբեր, սրտաբուխ:

Հայրը նրանց շեկավ կովից,  
Ոչ էլ սև թուղթը տեսան,  
Եվ տղերքը մոր մխիթար  
Բոյ քաշեցին ու հասան:

Ով կդնի ջանելության  
Սահմանները աշխարհում,  
Եվ ինչ անի սիրուն Սոնան  
Ջյուների մեջ դեռ պարուն:

Երեկ էր դեռ իր նշանի  
Գյուլում ծաղիկն էր պոկում,  
Այսօր մտքում աղջիկներին  
Հարսնացուներ է ջսկում:

— Սա սիրուն է, կարճ է մի քիչ,  
Ունի լավ սիրտ, լավ անուն,  
Բայց այս մեկը գործի ժամին  
Ավելի տաք է բանում:

Սա արծիվ է իր գործի մեջ,  
Բայց ընկնող է շատ կողի,  
Շատ է սիրում համ էլ խոսել,  
Հալ չունեմ շատ խոսողի:

Սա սիրուն է համով-կամով,  
Շատ պարկեշտ ու տնարար,  
Մազերը թուխ երկար ծամով,  
Լեզուն քաշած ու խոնարհ:

Բայց ուսումը թողեց թերի,  
Էլ ինչ խելոք կամ սիրուն,  
Ո՞վ անուսում հարս կբերի,  
Էս գրասեր աշխարհում:

Բայց է անում Սոնան մեկ-մեկ,  
Ծալած մատներն իր ձեռքի  
— Ձէ, աղիզներ, չեք հասնի դուք  
Ասլանի ձագ տղերքին:

Համ էլ տղերքը փոքր են շատ,  
Ինչու իզուր շտապենք,  
Խաղ ու պարը թողած կիսատ,  
Ջեռք ու ստքը շուտ կապենք.

Ո՞վ կդնի ջահելության  
Սահմանները աշխարհում,  
Եվ ի՞նչ անի սիրուն Սոնան  
Ջյուների մեջ դեռ պարուն.

Երեկ էր դեռ իր նշանի  
Գյուլում ծաղիկն էր պոկում,  
Այսօր մտքում աղջիկներից  
Հարսնացուներ է ջոկում.

—Սա սիրուն է, սակավախոս,  
Սա կարճ ու հաստ մի պերան,  
Սա շատ նիհար, ափսոս, ափսոս,  
Սա կողով, սա բացբերան.

Բաց է անում Սոնան մեկ-մեկ,  
Ծալած մատներն իր ձեռքի,  
Չէ, ազիզներ, չէք հասնի դուք,  
Ասլանի ձագ տղերքին.

Իսկ տղերքը վաղուց արդեն  
Ջոկած իրենց հարսնացուն.  
Պատվում են շուրջը նրանց,  
Սրտի գոները բացում.

Հանդիպում ենք նրանց հաճախ,  
Թե միայնակ, թե խմբում,  
Թե բաց դաշտի գործի մեջ տաք,  
Թե տանը, թե ակումբում:

Առանց հերթի ու հաշվելու  
Կյանքի ղեկն են դարձնում,  
Ով է իրեն սիրաբ թողած,  
Հիմա մորը հարցնում:

Շատ են սիրում տղերքն իրենց  
Սիրուն Սոնա մայրիկին,  
Բայց դե գիտեն իրենց համար,  
Իրենք պիտի բերեն կին:

Բաց է անում Սոնան մեկ-մեկ,  
Ծալած մատներն իր ձեռքի.  
—Ձէ, ազիզներ, չեք հասնի դուք,  
Ասլանի ձագ տղերքին:

## ԷՆ ՉԱՐ ՏՂԵՆ ՀԱՐԵՎԱՆԻ

Էն չար տղեն հարևանի,  
Որ իմ ուլին շատ էր տանջում,  
Որ կպչում էր ամեն բանից,  
Ու գյուղն իրեն գիժ էր կանչում.

Որ բռնում էր հոգին հանում  
Բաղիկներին կարմրատոտիկ,  
Որ ջաղաց էր անվերջ շինում  
Առվի ափին մեր տան մոտիկ.

Էն չար տղեն հարևանի,  
Որ ծամերս էր անվերջ քաշում,  
Որ նոր կարած շորը նանի  
Մի օրում էր ամբողջ մաշում.

Էն չար տղեն հարևանի,  
Որ մեծացավ ու ԿԻՄ կրեց,  
Էն որ ելավ գնաց քաղաք  
Ու թղթում ինձ բարև գրեց.

էն որ բոյ էր քաշել շինար  
Դարձել պարթև ու գեղանի.  
Ու ԿԻՄ-ի հետ կրճ.քին կախել  
Շող նշաններ քանի-քանի:

Ախ, էն աղեն հարևանի,  
Ախ, էն բարակ բոյը շինար,  
Ինչու ելներ գնար տանից,  
Ինչու էնքան հեռու գնար:

էն որ հեռու մեր սահմանին  
Կանգնել է ձիդ կանաչ շորում,  
Որ թշնամուն քշի տանի  
Մեր աշխարհից հեռու-հեռու:

Ախ, թե ինչո՞ւ աշխարհի մեջ  
Լինի սահման ու թշնամի.  
Որ նրա գեմ կանգնի անվերջ  
Իմ լավ աղեն հարևանի:

էն ում կարոտն եկել է ու  
Դեմ է առել հոգուս հասել,  
Որ ինձ վատ թոսք սասավ մի օր,  
Որ շեմ կարող ես ձեզ ասել:

Ախ, երբ պիտի էլ աշխարհում  
Չլինի սահման ու թշնամի,  
Որ ինձ տանի, տանի հեռու  
էն չար աղեն հարևանի:

## ՆԱՄԱԿ ՖԵՐՄԱՅԻՑ

Կանաչել են հող ու քարեր,  
Հող ու քարեր շունչդ առան,  
Կանաչել են ճյուղք ու ծառեր,  
Ճյուղք ու ծառեր շունչդ առան.

Քեզ է կանչում պաղ սարերից  
Տաք մայունը կարոտ գառան.  
Կաթ է կթել տաշտերը լի,  
Սեր է դրել նանը Մարան.

Հորթուկները մեր ֆերմայի  
Տես կարոտով մայում են, եկ.  
Ուլիկները սովոր ճամփիդ  
Մղկտարով նայում են, եկ.

Լավ են գործերը մեզանում,  
Սրտի դժվար գործից բացի,  
Շուտով կուրսեր են մեզ տանում,  
Դառնալու եմ քաղաքացի.

Մայրան նանի պատկերն առան  
Մեծացրին ու տվին թերթին  
Գովասանքի համար գրով  
Շողոյին են դրել հերթի:

Բա ով աչքալուսանք բերի  
Ձեռքիդ սովոր դուռը բանա.  
Բա ով պատվոգրի համար  
Մեր օղակով ուրախանա:

Ջուխա հորթ ունի Ծաղիկ կովը  
Չարաճճի ու գեղեցիկ.  
Չալիկ-մալիկ քույրիկներ են  
Ճակատները նախշուն պեծիկ:

Լավացել է ջերանը մեր,  
Տեսնես ոնց է տրտինդ տալիս,  
Հեանիցս երեխի պես  
Գիշեր-ցերեկ ման է գալիս:

Հորթուկները մեր ֆերմայի  
Տես կարոտով մայում են, եկ.  
Ուլիկները սովոր ճամփիդ  
Մղկտալով նայում են, եկ:

Լավ են գործերը մեզանում,  
Սրտի դժվար գործից բացի,  
Շուտով կուրսեր են մեզ տանում,  
Դառնալու եմ քաղաքացի:

## ԿԱՐՈՏԻ ԵՐԳԵՐ

### 1

Էն սում սիրով, սում կարոտով  
Հույսը բացված դուրս գնացիր,  
Ինչո՞ւ էն վաղ առավոտով  
Մեր տան դեմի դուռը բացիր՝

Ինչո՞ւ ասիր, թե կանչեցեք,  
Թե կանչեցեք իմ Ջանեին,  
Հանկարծ քո դեմ ջիգը անեին  
Ուրիշները ինձ տանեին:

Ինչո՞ւ կանցնես մեր տան մոտով  
Մեր տան մոտով դաշտը կերթաս,  
Էն սում կասես — բարև, քուրիկ,  
Բարև, քուրիկ, ջուր տուր մի թաս:

Էդ ձեր մեծը բրիգադի,  
Անդեմ մարդ է, թույլ ու տհաս,  
Ինչո՞ւ քեզ մի չի խրատի  
Որ ճամփեքին մղուլ հտաս:

Քո պատճառով ես էլ էստեղ  
Ուքս կախեմ, կամաց գնամ,  
Քո պատճառով ես էլ էստեղ  
Աղջիկներից որ ետ մնամ,

էնտեղ դաշտը մեզ է մնում,  
Արա ու արտոտ կանչում են մեզ,  
Ախ էդ մեծը բրիգադի  
Երբ պիտի լավ խրատի քեզ:

Հարսանիքը, որ շուտ անես,  
Քարշ գալու տեղ ինձ տուն տանես,  
Դառնաս շխտակ, լուրջ տղամարդ  
Խենթու թյունը գլխից հանես:

էն սում սիրով, սում կարոտով  
Լույսը բացված դուրս գնացիր.  
էն լուս ու մութ առավոտով  
Ո՞ւմ բախաավոր դուրս բացիր:

Կգա հիմա իմ սիրելին,  
 Ճութ-ճութ խաղող ինձ կբերի,  
 Կգա հիմա իմ սիրելին,  
 Ականջի օղ ինձ կբերի:

Կգա հիմա իմ սիրելին,  
 Ջեբն արբեշում կարմիր աղլուխ,  
 Կգա հիմա իմ սիրելին,  
 Երկար բոյով աչքերը թուխ:

Կտեսնի, որ դաշտում էսօր,  
 Փոխանցիկը ես եմ տարել,  
 Աշխատել եմ մինչև կեսօր,  
 Երկու օրվա գործ եմ արել:

Դե, իմ մասին չի խոսի նա,  
 Աղջիկներին մեր կգովի,  
 Բայց թե մեկ է՝ ես թե նրանք,  
 Ոնց պըտըտի սեր կգովի:

Կգա հիմա իմ սիրելին  
 Աղջիկներին կասի բարև,

Կասի, մրդեր դուք մեր գեղի  
Ես ձեզ պատած ճյուղք ու տերև:

Կասի, մատաղ ես ձեր խմբին,  
Ձեր օղակին, ձեր ավագին,  
Ձեզնով զուգած մեր ակումբին  
Ու ձեր տարած դրոշակին:

Կասի, շուտով ձեզ կտանեմ  
Քաղաքները ման ածելու,  
Մեծ հարսանիք պիտի անեմ՝  
Բախախ դարբասն եմ բացելու:

Բայց, ասում են, էդ անսիրտը  
Տղերքի հետ քաղաք գնաց.  
Վայ թե մի նոր բան պատահի  
Վայ թե հանկարծ էնտեղ մնա:

Ձէ, ես գիտեմ ինձ է փորձում,  
Խորամանկ է իմ սիրելին,  
Գիտեմ, հաշիվ կա էս գործում,  
Ծանր ու թանկ է իմ սիրելին:

Կուզի իրեն շատ կարոտեմ,  
Սիրտս բռնած պահի ձեռին,  
Որ մենակ ու մթնով գա տուն,  
Որ գա ինձ մոտ կես-գիշերին:

Ձէ, ես գիտեմ ինձ է փորձում,  
Խորամանկ է իմ սիրելին:

## ՅՈՐԵՆՀԱՏԻԿ

Կոլոտ Ջանեն իր օղակում  
Երգ է ասում սիրո մասին,  
Բայց այնպես է աղաղակում,  
Որ սարերում Կարոն լսի:

Կշկշում է Ջանեն անվերջ,  
Բայց բոլորից լավ է բանում.  
Ջանեն իրենց օղակի հետ  
Մոլախոտ է հողից հանում:

Ջանե, քանի առաջնու է  
Մոլախոտը հողից հանիր.  
Աշխարհի մեջ մոլախոտը  
Վատ է, Ջանե, ամեն բանից:

Ջահել ես դեռ չես հասկանում,  
Թե որքան մեծ գործ ես անում,  
Որ աշխարհի մեծ թշնամին  
Մոլախոտն է փարթամ աճող.  
Բոլոր ազնիվ հատիկների  
Ճամփան կտրող ու նվաճող:

Երբ անպտուղ մոլախոտը  
Արմատով են հողից հանում,  
Քեզ նման լավ հատիկները,  
Զանե, շուտ են փարթամանում:

Իսկ, տես, կարոն ձայնդ լսել,  
Սարից իջել տուն է գալիս.  
Իբր թե քեզ չի նկատել՝  
Աղջիկներին է միրգ աալիս:

Զանե, կյանքում սիրած գործն ու  
Սիրած մարդն է ամենից թանկ,  
Սիրած գործով, սիրած մարդով  
Կյանքն իսկապես դառնում է կյանք:

Առաջինը գործն է մարդու,  
Թուխլիկ Զանե, սրտով բանիր.  
Որ կարոյին շուտ հասնես դու,  
Շատ մոլախոտ հողից հանիր:

Երբ անպտուղ մոլախոտը  
Արմատով են հողից հանում.  
Քեզ նման լավ հատիկները  
Զանե, շուտ են փարթամանում:

## ԲԱՐՍԵՂ, ՊԱՊԻ ԵԼՈՒՑԹԸ

Ուրբաթախոս Բարսեղ պապին  
Ո՞նց է այսքան գործ կատարում.  
Երկու խոսք է հաղիվ կապել  
Իր կյանքի մեջ՝ մի ողջ դարում.

Բայց աղջիկներն անվերջ նրան  
Նեղն են լծում ու չարչարում.  
—Մի երկու խոսք ասա, ապի,  
Փպտա մի քիչ ու ծիծաղիր:

• Հերիք մթնես ամպի նման  
Մի քիչ գարնան անձրև մաղիր:

—Դե, կչկչան կաշաղակներ,  
Գլուխ չունեմ ես չաչանի.  
Թողեք բարի մի գործ անենք  
Թևերիս մեջ ուժ կա քանի:

Պարզևներ են տվել ապուն,  
Չայն են տվել որ խոսք ասի.  
Հաղիվ երկու խոսք է կապում  
Եվ ի՞նչ ասի նա իր մասին:

— Խերում կենաք  
Պատիվ արիք...  
— Պատիվ արիք  
Խերում կենաք...

— Մի երկու խոսք ասա, ապի,  
Ժպտա մի քիչ ու ծիծաղիր,  
Հերիք մթնես ամպի նման  
Մի քիչ գարնան անձրև մաղիր:

— Դե, կչկչան կաշաղակներ,  
Գլուխ չունեմ ես չաչանի,  
Թողեք բարի մի գործ անենք  
Թևերիս մեջ ուժ կա քանի:

Վերջացնում է խոսքը ապին  
Զայների մեջ երգ ու ծափի:

## ԶՏԵՍՆՎԱԾ ՈՐՍԿԱՆՐ

Հավաքվել են մեծ ու պուճուր  
Քարսեղ ապուն կայմեջ արել  
— Պատմիր, ապի, պատմիր տեսնենք,  
Թե ինչպես ես որսկան դառել:

Թող լինի ձեր կամքը բարի,  
Պատմեմ, որդիք, պատմեմ սիրով,  
Որսկան էի ես քաջարի,  
Զինված գալում թով ու թրով:

Հավք է գալիս՝ մեղք է, կասեմ,  
Նապաստակը՝ խեղճ ու կրակ.  
Դե, ոնց բռնես հրացանը  
Կխտարի կամ պախրի վրա:  
Քարայծին էլ էն սատանա  
Իմ գնդակը դեռ չի կպել,  
Վազր ու առյուծ, էլ ինչ ասեմ,  
Ինձ աշխարհում չի հանդիպել.  
Ու մի օր էլ ասի ախպեր,  
Հրացանն էս ուր եմ տանում:

էս անագին ծանրությունը  
Իզար տեղը ինձ բեր անում,  
Դեն եմ նկատում այնուհետև  
Ման եմ գալիս թեթև-թեթև:

Տուն եմ գալիս մի օր անա,  
Մութն ընկնում է անտառի մոտ,  
Ոչ մի գանակ ունեմ պահած,  
Ոչ մի կտարած թրի կտոր:

Մեկ էլ դեմս երկու կրակ  
Պղտպղտում են, շողին տալիս,  
Դե, գլխի եմ ընկնում ձեռաց,  
Գիտեմ, դեմս գայլ է գալիս:

Եվ լավ է, որ անտառում եմ.  
Թռչում եմ ես դեմի ծառին.  
Ազատում իմ գլուխն անխելք,  
Օրհնում ծառին ու անտառին:

Մնում եմ ես ծառի վրա,  
Մինչև օրը լավ լուսանում,  
Մինչև մարդկանց եռ ու զեռը  
Գազաններին քշում հեռու  
Անտառների խորքն է տանում.  
Բայց իմ կյանքում այդ գիշերը  
Ես ոչ մի օր չեմ մոռանում:

Ճիշտ է, որ շատ խղճով ես դու,  
Բայց դեմ կըլլես անխիղճ մեկին,  
Դե արի ու քո կյանքը տուր  
Կամ սուս ու փուս գլուխ թեքիր:

Ու ման եկա այնուհետև  
Ես իմ երկփող հրացանով.  
Դաշտով գնամ թե սարնիվեր,  
Թե անտառի խոր կածանով:

Հավք է գալիս՝ մեղք է, կասեմ,  
Նապաստակը՝ խեղճ ու կրակ.  
Դե, ոնց բռնես հրացանը  
Կխտորի կամ պախրի վրա.  
Քարայծին էլ էն սատանա  
Իմ գնդակը դեռ չի կպել.  
Վազր ու առյուծ, էլ ինչ ասեմ,  
Ինձ աշխարհում չի հանդիպել:

## ՄՐԳԱՇԱՏԻ ԱՂՋԻԿՆԵՐԻՆ

Ես խայտառակ եղա թամամ,  
Էլ ոնց տեսնեմ երես մարդու.  
Էն անամոթն աշխարհի մեջ  
Կանգնեց ասավ՝ սիրուն ես դու .

Ես խայտառակ եղա թամամ,  
Էն օր թագա մեր ակումբում  
Ասավ, ելիր, ասավ, պարենք,  
Թե չէ ճակտիդ պաչ կշարեմ .

Ես խայտառակ եղա թամամ,  
Ուզի-չուզի՝ ելա պարի,  
Պարից հետո ասավ, դուրս ել,  
Ասավ դուրս ել, ինձ հետ արի .

Դե, ինչ անեմ, որ չլսեմ,  
Ես էլ ելա ու գնացի,  
Ոչ մի պարգև, ոչ մի նվեր  
Մի փունջ կանաչ քոլից բացի .

Մի օղ, մի քող, մի բիւազուկ,  
Մի ջուխտ կարմիր սուրից բացի:

Ես խայտառակ եղա թամամ,  
Սև բերի իմ ազգ ու ցեղին,  
Էն անամոթն ինձ գիրկն առավ,  
Ասավ, Ջանե, ինձ կին եղիր,  
Ասավ, Ջանե, գնանք մեր տուն,  
Տեր դարձիր իմ սուն ու տեղին:

Դե, ի՞նչ անեմ, որ չլսեմ.  
Ես էլ ելա ու գնացի.  
է, գնալուց հետո էլ ի՞նչ,  
Տուն էր սարքի ու մնացի...

Ես խայտառակ եղա թամամ,  
Հինգ օր է դաշտ չեմ դուրս եկել,  
Աղջիկները իմ օղակի  
Շվարել են, գլուխ թեքել:

Դարդ մի արեք, իմ աղջիկներ  
Ես էդ ցավին դեղ կճարեմ.  
Էնպես ուժ տամ իմ թևերին,  
Հինգ օղակի գործ կասարեմ:

Մենակ ուրիշ հարցեր չտաք,  
Քամուն չտաք իզուր բառեր,  
Թե կարող եք մի-մի արծիվ  
Առեք դուք էլ ու տուն գառեք:

## Զ Ր Ո Ւ Յ Ց

— Էնպես ուսում կտամ որդուս՝  
Իշխի դեղ ու դարմանի,  
Մտնի ամեն խրճիթ ու տուն,  
Ամեն ցավի ճար անի.

— Էնպես ուսում կտամ որդուս՝  
Հանդը վարի մի օրում.  
Մի թիզ խոպան հող շթսղնի  
Ոչ անտառում, ոչ ձորում.

— Էնպես ուսում կտամ որդուս՝  
Բերդեր շինի ու քաղաք.  
Էնպես ուսում կտամ որդուս՝  
Աստղերի հետ կխաղա.

Ու նստած են մայրիկները  
Դեզի թանձր շվաքում.  
Հասկ ու հատիկ ափերի մեջ,  
Նախշուն երազը հոգում.

Իսկ ապագա բժիշկը մեծ,  
Գիտնականն ու օգաչուն  
Վազվզում են կալերի մեջ  
Ու դեղից դեղ են թռչում:

Թռչում կայծ ու կրակ դառած,  
Ծափ են տալիս, ծիծաղում,  
Մի-մի փայտի կտոր ճարած  
Զիարշավի են խաղում:

Գյուղի բարձր կանաչ ափին  
Դպրոցի շենք են շինում  
Վարպետները մուրճը խփում  
Ու քար-քարի են դնում:

Ու քարերից հատիկ-հատիկ  
Ելնում է պատն ու ժպտում:  
Կանաչ լեռան ստորոտից  
Կանգնում է մի ճերմակ տուն:

Ու նստած են մայրիկները  
Գեղի թանձր շվաքում:  
Հասկ ու հատիկ ափերի մեջ,  
Նախշուն երազը հագում:

Էնպես ուսում կտամ որդուս՝  
Բերգեր շինի ու քաղաք...  
— Էնպես ուսում կտամ որդուս՝  
Աստղերի հետ կխաղա...

\*  
\* \* \*

Տասը որդի ունի Ջանին,  
Տասն աժդահա անձնվեր,  
Բայց թոռների հաշիվը արդեն  
Շատ վաղուց է կորցրել:

Մեկը խաղաղ, մեկն աղմկոտ,  
Մեկը բարակ, մեկը գեր,  
Մեկը սևուկ, ածխի կտոր,  
Մեկը խաժակն, ոսկեհեր:

Մեկը խոհուն, խաղաղ ա. խիստ  
կարգացող ու գրքասեր,  
Մեկն անհամբեր ու անհանգիստ,  
Ուշքն ու միտքը խաղում դեռ:

Տասը որդի ունի Ջանին,  
Տասն աժդահա, անձնվեր,  
Թոռնիկներին խառնել է նա,  
Բայց աշխօր է անում դեռ:

— Հերիք արդեն, Չանի մայրիկ,  
Հերիք, շատ ես աշխատել,  
— Է, ի՞նչ կուզես ասել, որդի,  
Կուզես ասել, շատ եմ ծեր:

Մարդու ձեռքը, որ դորձ անի,  
Ինչպե՞ս պարապ նստի մարդ,  
Մարդու սիրտը մինչ կտանի  
Պարապ նստի աչքը բաց:

Մի տասը թոռ մտուր կտամ,  
Մի տասը՝ մանկապարտեզ,  
Մի տասի էլ, որ շատ խնդրես,  
Գործիկ համար կրտամ քեզ:

Մի տասը թոռ ուսում կրտամ,  
Մի տասի կըստակեմ,  
Չեր չսիրած աստծու հետ  
Հաշիվներս նոր փակեմ:

Տասը որդի ունի Չանին,  
Տասն աժդահա անձնվեր,  
Բայց թոռների հաշիվն արդեն  
Շատ վաղուց է կորցրել:

ԵՐԳ ԵՐԵՎԱՆԻՆ

## ԵՐԿԻՐ ՀԱՅՐԵՆԻ

Այս երկրի հողնած, քարակոփ հողի  
Ամեն փշուրը  
Անառիկ բերդի մի սյուն է եղել.  
Այս երկրի շիկնած լեռները ճեղքող  
Մի կաթիլ ջուրը  
Մի անտառապատ դաշտ է հեղեղել.  
Այստեղ ամեն մի քար ու թփի տակ  
Կա ընկած մի թագ,  
Այստեղ ամեն մի աննշան բլուր  
Պահում է ընկած արքայի մի սուր.  
Ամեն խաչքարի մամուռտ կողերին  
Պատմություններ կան  
Ծվարած լուին —  
Թե ժողովրդներից քանի բյուր անգամ  
Ելել են խորհող գմբեթներ քարե,  
Թե հայ բնավեր շինականը ծեր  
Ինչպես է արնոտ  
Հողը հարդարել,  
Ինչպես է այրված անապատներում  
Այգիներ շինել դրախտավայել,

Կերտել, կառուցել,  
Ու դեռ չավարտած  
Ավերման անով աշխարհին նայել,  
Արյամբ է գրված պատմությունը մեր,  
Անունները մեր՝ զոհերի ցուցակ,  
Եվ դու, միայն դու, պայծառ Հոկտեմբեր,  
Վերջակես դրիր այդ ցուցակի տակ:

## Հ Ո Ղ Ր

Որքան անուշ բուրմունք ու համ,  
Որքան հյութեր արևաքամ,  
Բերք ու բարիք ու բարեկամ  
Չոր թվացող այս հողի մեջ:

Որքան ներկեր ու նրբերանդ  
Ծիլ ու ծաղիկ սսկեբերան  
Գույներ շքեղ ու հուրհրան  
Սև թվացող այս հողի մեջ:

Որքան շշուկ խորհրդավոր,  
Որքան մրմունջ անուշ անդորր,  
Որքան աղմուկ անդրնդախոր  
Լուռ թվացող այս հողի մեջ:

Սիրտս նման է սև հողին  
Սիրտս նման է շոր հողին  
Սիրտս նման է լուռ հողին:

## Փ Շ Ա Տ Ե Ն Ի

Փշատենի, համեստ ու պարզ փշատենի,  
Պատուհների խտուժյունից ճյուղերը կախ  
Փշատենի,

Սիրագործով ու սրտաշարժ փշատենի  
Դեղին ոսկի հատիկներով արծաթաշաղ,  
Գիրկս առնեմ ես քո գալար ճյուղերն արծաթ  
Ու պտույտ գամ բոլոր կողմերը աշխարհի  
Երկրներում բազմալեզու ու բազմամարդ  
Նվիրեմ քեզ ամեն հողի, ամեն քարի,  
Որ տեսնես դու ամեն երկիր,  
Ծաղկես ամեն երկնքի տակ  
Ու գույց տաս մի փոքրիկ պատկեր  
Իմ աշխարհից շռայլ ու տաք,  
Թե ինչպես են ծաղիկները  
Քարերի մեջ կոկոն բանում,  
Թե ինչպես է փոքրիկ ճյուղը  
Պատուհների մեծ բեռ տանում,  
Թե ինչպես է անափ սիրույց  
Լցվում կյանքն ու հարստանում,  
Թե ինչպես է բուրում հողը

Իմ հեռավոր Հայաստանում.

Փշատենի, համեստ ու պարզ փշատենի  
Պատուհների խտությունից ճյուղերը կախ  
Փշատենի,

Սիրագործով ու սրտաշարժ փշատենի,  
Դեղին ոսկի հատիկներով արծաթաշաղ  
Ու տաք բույրով, այնպես բույրով փշատենի,  
Որի խաղաղ ծփանքները տալու համար  
Ոչ մի լեզու,  
Ոչ մի բարբառ բռուկ չունի:

## ԵՐԳ ԵՐԵՎԱՆԻՆ

### 1

Դու իմ սրտի, դու իմ հոգու,  
Իմ կարոտի մայրաքաղաք,  
Արարատյան կրակի մեջ  
Սառն ակունքով նստած խաղաղ:

Սիրում եմ քո տաք շենքերի  
Ճակատները արևավարս.  
Ժեռ քարերին ժանյակ անող  
Քարտաշներիդ հանճարը պարզ:

Քո կառուցման փոշին արդար,  
Ու սրտագին աղմուկը քո.  
Փողոցներդ լայն ու հարթած  
Ու հողմահար քո երեկոն:

Սիրում եմ քո մրգաթաթախ  
Մանուկներին ցրված այգում,  
Աղբյուրներիդ արծաթը պաղ,  
Շոգն ու ցուրտը քո ծայրագույն:

Քո թուխ կանանց օրևանամ,  
Քո մայրերին սիրամորմոք,  
Աղջիկներին քո սսկեմամ  
Ու մայրախոս մբմունջը քո:

Ջանկներին քո անձանգիստ,  
Այգին արած ընթերցարան.  
Գիտունների գեմքերը խիստ  
Հողապորժի հեաքը վրան:

Քո լուսեղեն փողոցներում  
Ինստիտուտներ աներից շատ,  
Գիտնականներ բազմասերունդ,  
Պատանիներ մտքով խիզախ:

Ստանած իրար քաղաք ու գյուղ  
Ուրիշ տեսակ աշխարհ ևս դու.  
Սիրատոչսր ու սրատբուխ  
Արև, այգի ու քար ևս դու:

Ուր էլ լինեմ, ուր էլ գնամ  
Հոգուս մեջ է ձայնդ խնդուն.  
Ուր էլ լինեմ, ուր էլ գնամ  
Հազար ձայնով կանչում ևս տուն:

Ամեն երազ հույզ ու խոկում  
Քո անունով է շաղախված.  
Թող հրկիզվեմ ևս քո շողում,  
Քո փոշու մեջ լինեմ թաղված:

Միայն տեսնեմ, միայն զգամ  
Քո վերելքը բաղմազազակ  
Պու իմ սրտի, դու իմ հոգու,  
Իմ կարոտի մայրաքաղաք:

## ՔԱՐՏԵՉԻ ԱՌԱՋ

2

Դու մի խաղողի տերև ես փռած  
Այս մեծ, սրտաբաց քարտեզի վրա,  
Արևի կեսը ավերիդ առած —  
Այս մեծ, սրտաբաց քարտեզի վրա:

Դու հողում պահած փշուր ես հողի,  
Ուրախության ջինջ արցունքով ջրած,  
Հատիկ ես քաղցրիկ ճաքած խաղողի —  
Այս լայն, սրտաբաց քարտեզի վրա:

Ձէ, այգի ես դու մրգերով այրող,  
Ճյուղք ու տերևով քո կանաչ-կրակ,  
Արև ես, լույս ես, դու մայր ես ու հող, —  
Այս լայն, սրտաբաց քարտեզի վրա:

Մենք սիրատույնը պահակներն ենք քո  
Մեր կյանքն ու հողին քեզ համար դրած,  
Որ ծաղկես դու միշտ երջանիկ երգով, —  
Այս լայն սրտաբաց քարտեզի վրա:

## ՅԱՅՏԱՂԲՅՈՒՐՆԵՐ ՓՈՔՐԻԿ

### 3

Յայտադբյուրներ փոքրիկ աղջիկների նման,  
Տաք Երևանի այրող մայթերին,  
Կանգնած հրկիզող արևի դիմաց  
Լեռան սառնորակ աղբյուրը ձեռին:

Երեկ էր փոշոտ մեր փողոցներում  
Ջուր էին ծախում որբերը բոբիկ,  
Հոգնած ու վախտ ափերում պահած  
Արցունքաշաղախ մի քանի կոպեկ:

Դուք նրանց անպին տրձանն եք հիմա  
Մեր երջանկության լիության դարում:

Յայտադբյուրներ փոքրիկ աղջիկների նման,  
Որ հիշեցնեք մեզ, թե մեզնից առաջ,  
Թե մեզնից առաջ ինչ կար աշխարհում:



Նայում եմ շենքերին  
Բազմահարկյան ու վեհ,  
Կարդում եմ աֆիշը  
Մարմարյանե  
Պատին—  
Հիշում եմ խրճիթը  
Մեր հին ու սև,  
Որպես մեռնող ու ծեր  
Հարազատի:

Նայում եմ պուրակին  
Այս մշտադալար,  
Զիպ սոսիների  
Կատարներին վեր  
Հիշում թթենին  
Մեր դեղնաթառամ,  
Զառամած այգին  
Մեր կիսավեր:

Ձեզ խաղաղ հանգիստ,  
Բարի ճամփա ձեզ,  
Մեր գետնափորներ,  
Խրճիթներ մեր հին.  
Դուք էք մեզ բերել  
Հասցրել այստեղ,  
Այս մարմարակերտ  
Պալատներին:

## ԱՐԱՋԻ ԱՓԻՆ

Հոսում է միրգը ալիքների մեջ,  
Փարվել են իրար աշուն ու Արագ,  
Հոսում է մրգոտ ալիքների մեջ  
Երջանկությունն իմ հայրենատարագ,

Դեղձենին ծանր՝ ճյուղերը կախել,  
Լվացվել է վաղ սառնորակ ջրով,  
Փշատն արծաթն ու ոսկին շաղախել  
Ինչ-որ երգեր է խշխշում սիրով:

Փոքրիկ մասրենին փշերը ցցել  
Մուգ մասուրներ է շարել թևերին,  
Ճաքել է նուռը ու սիրտը բացել  
Դեղնած մասրենուն ժպտում է վերից:

Ամեն ինչ որդուն տված մոր նման  
Իջել է վազը, փարվել է հողին,  
Արևը վերջին շողերն ուղարկել  
Վերջին ողկույզն է ներկում խաղողի:

Հպարտ ժպտում է այգին ոսկեվարս,  
Որ պտուղներն իր լցրել է հյութով  
Ու չի տխրում, չի անհանգստանում,  
Որ ձմեռը պաղ գալու է շուտով:

## ԴԵՂՉԵՆԻ

Շիկնել էս դու, իմ դեղձենի,  
Հուռ շփոթված աղջկա պես,  
Ու խենթ քամին, խելառ քամին  
Չգիտի ո՞նց փայփայի քեզ:

Տես, ինչպես է նայում խոժոռ  
Ժայռը նորքի ձորին թիկնած,  
Դու շփոթված սիրո խոսքից՝  
Դու քո սրտի հրով շիկնած:

Ծով են դառնում հմայքները  
Քո նուրբ ու հեզ,  
Եվ օր-օրի ավելի են ավելանում,  
Որովհետև դու չես տեսնում  
Չես նայում քեզ,  
Որովհետև դու այդ մասին  
Հոգ չես տանում:

## ԿՈՄԻՏԱՍԻՆ

### 1

Այս խաղիկներում, որ դով են ու տաք  
Գարնան կարոտի անձրևն է, գալիս է.  
Ասես թե մեկն այդ անձրևների տակ  
Նայելով աշխարհին ժպտում ու լալիս է.

Որքան ուրախ լինեմ, որքան  
 Խնդումնալից,  
 Սիրտս այրվում է,  
 Երբ հիշում եմ քեզ, Կոմիտաս:

Հոկ դագաղն եմ տեսել ես քո,  
 Այն էլ հեռվից,  
 Սիրտս այրվում է,  
 Երբ հիշում եմ քեզ, Կոմիտաս:

Թե տխրելու ոչ մի առիթ  
 Չգտնվի իմ աշխարհում,  
 Հերիք է լոկ կարոտակեզ  
 Մեծ կյանքը քո,  
 Դու մեր երգի մեղմ լուսաբաց:

Դու տխրաշաղ  
 Մեղմ երեկո,  
 Սիրտս այրվում է,  
 Երբ հիշում եմ քեզ, Կոմիտաս:

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԻՉ ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ

Քո անունն ինձ արև է հուշում  
Եվ արևի տակ շիկացած քարեր.  
Քո անունով ես այգի եմ հիշում,  
Ծանրացած ողկույզ, ծիրանի ծառեր.  
Ես քո անունի ջերմ հնչյուններում  
Վայրերն եմ տեսնում մեր սրբանվեր,  
Մեր ցորենաշատ արտերի հեռուն  
Ու լուռ հրդեհվող ծաղիկները մեր.  
Եվ որպես երկիր մի շառագունող,  
Որպես հարազատ հայրենի արև  
Ես ուզում եմ քո պայծառ անունով  
Երգերի փոքրիկ գիրքն իմ զարդարել.  
Դու, սրտեր վառող գույների երգիչ,  
Քո կյանքին երկար ու երկար դարեր,  
Քո անունը ինձ արև է հուշում  
Եվ արևի տակ շիկացած քարեր:

## ՈՐԴՈՒՍ

Դու մրդով լի մեր այգին ես,  
Դեղձենին մեր նոր փթթած,  
Մոր կարոտի նման հին ես  
Եվ ամեն օր նոր գտած:

Դու մեր բակն ես, հորս տունն իմ  
Ողջը նորից կյանք առած,  
Գիրկս եկած մանկությունն իմ,  
Թոթովանքներն իմ թռած:

Դու աղմկոտ իմ Արագն ես  
Գիրկդ առած ճյուղք ու ծառ,  
Մեր տաք հողի սիրած վազն ես  
Ու ողկույզը ոսկեվառ:

Հայրենիքն ես, հորս տունն ես,  
Դաշտերը մեր բերքառատ,  
Իմ Սեանի հատակ հունն ես  
Նրա հրդեհն ես վառած:

Աղմկահույզ իմ այս օրն ես  
Քիչ-քիչ ինձնից հեռացող,  
Դու բողբոջն ես ու շատ խորն ես  
Աղմուկներով եռացող:

Իմ երեկն ես, վաղվա օրն ես  
Ինչ կա ինձնով կյանք առնող,  
Ինչ կա ինձնով, իմ շուրջն, իմ մեջ  
Դեպի արևը հառնող:

Տես, ինչ մեծ ես,  
Ինչ անգին ես,  
Ինչ անհաղթ ես  
Ու անհաս:

Բո փայտե ձին հազիվ տանող,  
Հազիվ տոտիկ-տոտիկ անող,  
Փոքրիկ-փոքրիկ  
Իմ տղաս:

## ՕՐՈՐ

Դրսում ցուրտ է,  
Ներսում տաք է,  
Քնիր, քնիր,  
Դուռ, պատուհան  
Ամուր փակ է,  
Քնիր, քնիր:

Բարձդ հարմար  
Ու մաքուր է,  
Քնիր, քնիր,  
Շուրջդ սիրո  
Ու երազի  
Նման լուռ է,  
Քնիր, քնիր:

Իսկ շատ հեռվում  
Արթնանում են  
Պայթող արկից,  
Իսկ շատ հեռվում  
Արթնանում են

Թե՛՛ ի կրակից,  
Ու ցամփն աշդ խեղճ  
Փոքրիկների  
Անտուն, անքուն  
Բուրբ բարի  
Սրտերի մեջ  
Այրվում է ու  
Արձագանքում,  
Ու խորհում են  
Մայրեր, քույրեր,  
Հայրեր անթիվ,  
Խորհում են խոր,  
Մանուկների  
Համար անտուն,  
Մերկ ու բոբիկ,  
Արտասովաթոր.  
Ու խորհում են  
Մայրեր, քույրեր,  
Հայրեր անթիվ,  
Խորհում են խոր,  
Թե ի՞նչ անեն,  
Որ բուրբ  
Ապրեն անհոգ  
Ու բախտավոր

Ապրեն քեզ պես,  
Այգիների  
Մարմանդ հովում,

Քնեն քեզ պես  
Երազների  
Կապույտ ծովում:

Ձի հասնի քեզ  
Ոչ մի կրակ,  
Ոչ մի ական,  
Քնիր, քնիր.  
Ապրում ես դու.  
Մեծ աշխարհում  
Սովետական,  
Քնիր, քնիր:

Այս բառը դեռ  
Չես հասկանա  
Քնիր, քնիր  
Մինչև հասուն  
Տարիները  
Միտքդ բանան,  
Քնիր, քնիր

Մինչև որ դու  
Կարողանաս  
Անմեղ, արդար  
Լեզվով ասել,  
Թե կյանքը ինչ  
Հստակ հուն է,  
Թե ինչ անհուն

Ննդություն է  
Աշխարհում քեզ  
Բաժին հասել  
Գնիր, քնիր:

## Պ Ի Շ Ե Ր Ե Ր Պ

Գիշեր է ուշ, ձմռան գիշեր  
Ինչ-որ թեթև ձայն է գալիս,  
Ո՞վ է արդյոք, ո՞ւմ է հիշել,  
Ո՞վ է սիրս խոստում տալիս:

Մեկն ինձ հանգ է թելադրում  
Հույսերի մեջ այդ անկրակ,  
Ինչ-որ մեկը երգ է գրում  
Դրսում սառած մայթի վրա:  
Գիշերապահն է այդ անքուն,  
Վեր է կացել՝ մայթն է մաքրում,  
Որ լուսանա ու վեր կենան  
Մանուկները գնան դասի,  
Դուրս գան մարդիկ չմտածեն  
Սառն ու դժվար ճամփի մասին:  
Փչում է նա ձեռքերի մեջ  
Ու լուռ սառած մայթն է մաքրում,  
Երբ նիրհում է այս բազմավեճ,  
Աշխարհն ամբողջ մտած խոր քուն:

Պիշեր է ուշ, ձմռան գիշեր,  
Ինչ-որ թեթև ձայն է դալիս,  
Ո՞վ է արդյոք, ո՞ւմ է հիշել,  
Ո՞ւմ են սիրո խոստում տալիս:

## ԵՐԵՎԱՆԻ ԱՄԱՌԸ

Թերթիկներում պահած  
Արեգակի սերը,  
Փակելով թևերն իր  
Անջնջելի,  
Համառ.

Օրացույցը մեջտեղից  
Տարին կիսել է  
Ու բերել է Երևանին.  
Ամառ.

Չկա ամպի կտոր,  
Երկինքը լուռ է.  
Դժվար թե անձրևներ տեղան.  
Բացել է այգեստանն  
Իր փակած դուռը,  
Փռել է անծայր  
Մրգի սեղան:

Իջնում է Նորքից  
Լի քարավանը,

Ծանր ու խռպոտ ՋԻՄ-եր,  
Սայլեր հնադարյան,  
«Պորեդաներ» կոկիկ,  
Հպարտ, ինքնահավան,  
Մոտոռներ խլացնող,  
Հեծանիվներ սուսիկ,  
Մայրեր մինչ այսօր  
Բերանները փակած,  
Աղջիկներ մրգածոր,  
Կողովները ուսին,  
Փշատենի արծաթ,  
Նուռ ու նարինջ հազած:

Իջնում է Նորքից  
Լի քարավանը,  
Մերթ աղմկահույզ,  
Մերթ զգույշ,  
Կամայ  
Լցվում է մրգով  
Իմ Երևանը:  
Ամառ է մրգաշաղախ,  
Երևանի ամառ:

## ԴԵՊԻ ԼԵՆԻՆՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԸ ՄԵՐ

Մեր լայն, արևոտ  
Հրապարակում  
Լուռ կանգնած ես դու անհասի կատար,  
Շուրջդ ծառերն են  
Մեր գեղազանգուր,  
Ու փողոցները իրարու հատած,  
Իջնում է նալբանդյան փողոցը լույս,  
Իր հոգու նման  
Շիտակ ու լայն,  
Աբովյանն է գալիս մեղմ ու սրտահույզ,  
Փողոցը սիրո, ջահելության.  
Փարվում են իրար  
Գնունի, Տերյան,  
Շահումյանն է վարից ուղիղ բարձրանում,  
Եվ փողոցները  
Մեր բազմադարյան  
Հայնանում են հար ու լուսանում  
Իրենց արևոտ սրտերում պահած  
Մի-մի հարազատ  
Ու վեհ անուն...

Սրանք հրկիզված ավագներն են մեր,  
Որ նվիրվել են հայրենի հողին  
Խոհերով խորունկ,  
Կյանքով անձնվեր  
Ցույց են տվել մեզ քո պայծառ ուղին...  
Հիմա էլ լուսե  
Ճամփա են դառել  
Փովել մեր առջև ջերմ ու սրտակեզ,  
Մեր շուրջն անհամար  
Հապաեր են շարել  
Ու բերում են մեզ  
Դարձյալ դեպի քեզ...

## ԽԱՂՈՂԻ ՎԱԶ

Դու, որ այդքան հրաշանուշ  
Քաղցրություն ես հողից հանում  
Ու ոսկեթել քո ծիլերով  
Ավազ ու քար շաքար անում:  
Դու հար մնաս, դալար մնաս,  
Խաղողի վազ Երևանում:

Դու, որ բարակ ճյուղերիդ մեջ  
Թե՛ւ գինի ես այդքան տանում  
Ու մտնում ես ամեն մի տուն,  
Սիրո սեղան ու սիրտ բանում,  
Դու հար մնաս, դալար մնաս,  
Խաղողի վազ Երևանում:

Բայց ուզում եմ դու հար մնաս  
Ու տարածվես աշխարհով մեկ.  
Հասնես հյուսիս, հասնես հարավ  
Եվ բեռները սառցաբեկ:

Ողկույզներով ոսկեհատիկ  
Ելնես սառցե սարերն ի վեր,

Որ ճյուղի տեղ խաղող կաթի  
Այգի դառնա սառույց ու լեռ:

Ու խինդը մեր խաղողիդ պես  
Թող ծանրանա քո սաղարթում,  
Որ գինուդ պես փրփրադեզ  
Լցնես ծարավ հոգին մարդու,  
Լցնես ամեն կուժ ու սափոր,  
Լցնես ամեն բաժակ ու թաս—  
Խնդությունով անհուն ու խոր,  
Բարիքներով հազարանուն,  
Ու հար մնաս, դալար մնաս,  
Խաղողի վազ Նրեանում:

## ԱՇՆԱՆԱՄՈՒՏ

Ասում եք աշունը մոտիկ է,  
Ու մնացել է գարունը հեռու.  
Կտանեն արտի վերջին հատիկը,  
Կդեղնի այգին, կսառչի առուն:

Իզուր եք փորձում ինձ ահաբեկել  
Մոտեցող աշնան գույներով դեղին,  
Իզուր եք ուզում գլուխս թեքեմ  
Գարնան կարոտով ու նայեմ հողին.  
Ում է հարկավոր ծաղկունքը գարնան,  
Թե նրանք դեղին մրգեր չդառնան,  
Ում է հարկավոր ծաղկունքը գարնան,  
Թե գարնան այգին խաղող չդառնա:

Ու թե խաղողը չդառնա գինի  
էլ ինչպես պիտի վայելքը լինի,  
Եթե խաղողը չդառնա գինի.  
Պտուղն է ծառի ճյուղերը թեքել,  
Ու չկա ոչինչ այստեղ անտեղի,  
Իզուր եք փորձում ինձ ահաբեկել  
Մոտեցող աշնան գույներով դեղին:

## ԱՇՈՒՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Քիտեմ աշխարհը սիրում է գարունը  
Ծառերը ծաղկած, տերևալից,  
Բայց մենք բոլորս աշխարհում սիրում ենք  
Աշունը մեր տաք Երևանի:

Երբ քաղցրից ճաքում է խաղողի հատիկը,  
Դեղնում է Խարջին ու ծանրանում,  
Երբ կանգ են առնում հակերը լիքը,  
Ջարդվում են կողոմփներն ու շեն տանում:

Երբ հրկիզվում են դեղձի դեզերը,  
Ու խառնվում են չիր ու կաղին,  
Երբ ծանր բեռից կքած վազերը  
Ապավինում են նորից հողին:

Թող Երևանի աշուն ունենա  
Ամեն հղացումն, ամեն հուզումդ,  
Նրանից հետո ձմեռը թող գա  
Եվ դաժան լինի որքան ուզում է:

ԵՐԵՎԱՆԻ ՇՈՒԿԱՆ

\* \*  
\* \*

Շաղում է, շողում  
Երևանի շուկան,  
Կորած խաղողում  
Երևանի շուկան,  
Այրվում են Շաֆրան  
Դեղձի դեզերը,  
Սևուկ սալորը  
Համեստ ու լուռ է.  
Փշատն արևից  
Այտերը կիզել է,  
Շոգից սրտնեղել,  
Ճաքել է նուռը,  
Բոլոր գույներով  
Արևն այստեղ է,  
Քամված են բոլոր  
Հյութերը հողի,  
Բայց բոլորին էլ  
Խելքից հանողը  
Ծանր ողկույզն է  
Խարջի խաղողի,  
Պայթում են արդեն

Լի կրպակները,  
Թափվում է միրգը  
Բաց դռներից,  
Հազիվ մեքենան  
Նետել է դեզն իր,  
Սայլեր են գալիս  
Կքած բեռից,  
Ուրիշ ելք չկա,  
Լցնում են տանիք,  
Փռվում են մրգի  
Գորգերն արագ,  
Ճոճվում են դռնից  
Ու պատուհանից  
Կախաններն անթիվ,  
Հրդեհ դառած:

Սփռոց է բացել  
Տակառի վրա,  
Ընկեր է կանչում  
Քեռի Գևոն,  
Բռնել է փարչը  
Արծաթաջրած,  
Գոված թամադա  
Պապի ձևով,  
—Սոցմրցումն, ախպեր,  
Սոցմրցում լինի,  
Խոստում ենք տվել,  
Պատվով տանենք,

Բայց ով կխմի  
Այսքան շատ գինի,  
Թե մենք ինքներս  
Քոմակ չանենք:

Գովում են շիկնած  
Հողն ու խաղողը,  
Կրպակից կրպակ  
Թաս են դարկում.  
— Նեղ օրին հասնենք,  
Կիսենք լեն օրը,  
Հեչ բան է կյանքը  
Մենակ մարդու:

Փնչում է հոգնած  
Լի բեռնատարը,  
Մրգի մի դեզ է  
Ճոճվում ուսին.  
Շեկլիկ մի աղջիկ  
Կանգնել է վարը,  
Վազի տերև է  
Կախվել հյուսից:  
Ավտոյի վրա  
Մրգի մի սար է,  
Նայում է աղջիկն  
Անուշ բռնին,  
Զանգը խփում է  
Մեքենավարը,  
— Վախեցա՞ր, սիրունս,

Ներիր...

Ներիր...

— Բեռդ լազն է շատ,

Ջահել ախպերս,

Աչքս էր, մնաց,

Էհ, ինչ անեմ...

— Ոչինչ համ չունի

Առանց սիրունի,

Գու ես պակաս հենց,

Արի տանեմ.

Աշխույժ մի ծերուկ

Երգում է կամաց,

Խիտ կախանների

Խուրճը ձեռին,

Գովում խոսքերով

Մրգերից քամած,

Հայրենի տունն ու

Հողը բերրի.

— Այստեղ համեցեք,

Համեցեք այստեղ,

Մաքուր հայկական

Ընտիր բարիք.

Միրգ չէ հասարակ,

Այլ մուրապի դեղ,

Ինչ երազ ունեք,

Կկատարի.

Կողքին նստած է

Կողովների մեջ

Ճակատին ոսկի  
Խաթուն մայրիկը,  
Ծանր հյուսերը  
Փաթաթեյ է վեր,  
Շարքաթ է ծորում  
Քողի ծայրից:

Դեմից գալիս է  
Աղմկոտ մի խումբ,  
Ուսանողներ են  
Առույգ, թեթև,  
Ծիծաղը թափվում է,  
Երգը թնդում,  
Հոսում են զվարթ  
Ձայնի գետեր:

— Լսում ես, անուշ  
Մրգի մայրիկ մեր,  
Արձակուրդ առանք,  
Գյուղ ենք գնում,  
Իսկ այս հսկային,  
Որ մանուկ է դեռ,  
Կարմիր բանակ ենք  
Ճամփու դնում:  
Պայթում ենք ախր  
Պաղած երեսից,  
Խիստ է ձևանում  
Փիլիսոփա,

Մի կուժ խենթացնող  
Գինի բերեք ինձ  
Բռնել է այսօր  
Քեֆի նոպա,  
Քննություն տվել ենք,  
Թողալն առել,  
Մի կուժ խենթացնող  
Գինի տվեք,  
Երեկվանից ենք  
Գիտուն դառել:  
Հաստատենք գինով  
Ու նոր չվենք:

Ու հեռանում է  
Աղմկատ մի խումբ,  
Ուսանողներ են  
Առույզ թեթև,  
Ծիծաղը թափվում է  
Երգը թնդում,  
Հոսում են գվարթ  
Զայնի գետեր:

Ճոճվում են դանդաղ  
Զամբյուղներ կանանց  
Եվ գլխանոցներ  
Մայրենի ոճով,  
Խմբերը խիտ են,  
Ճամփաներն անանց,

Ծփում է այրվող  
 Գույների մի ծով:  
 Այստեղ շուկայում  
 Մեր Երևանի  
 Ինչեր ասես, որ  
 Ձի գտնի մարդ.  
 Հին կարասներից  
 Հանած գինի,  
 Նոր կոկոն բացող  
 Շուշան ու վարդ:  
 Մրգի մասին, դե,  
 Խոսքն ավելորդ է  
 Մրգերից անուշ  
 Բողկ ու բազուկ,  
 Քաղցրից խտացել,  
 Իջել է տոթը,  
 Լավաշներ թոնրի,  
 Գաթա, նազուկ,  
 Գիրք,  
     թերթեր,  
         աֆիշ,  
 Վերջին լուրեր  
 Եվ բարձրախոսներ,  
 Որոտախոս,  
 Մայր հողից հանած  
 Տաք-տաք ջրեր,  
 Ճայտադբյուրներ սլաղ  
 Արծաթահոս...

Չկա այստեղ կեղծի  
Փոքրիկ հյուլե անգամ,  
Բնությունն է այստեղ  
Մաքուր, ընտիր,  
Չկա մարդու հոգուն  
Անհանդուրժող, անկամ  
Գնի տատանումներ  
Բախտախնդիր:

Մրգի հրթիռ է,  
Բերքի հանդես,  
Ներքին մի ուրիշ կա  
Այս ժխորում,  
Այստեղ մի ձեռք է  
Զգույշ:

անտես,

Կշռում ամեն ինչ,

Չափավորում:

Չափերի համար

Կենտրոն գուցե,

Չափազանց արգել կան

Մեր գործերում,

Չափազանցներն են

Հասած սրտով

Չափազանցներ 1944

Մեր տուն հոսում...

ՈՒՇԵՆ

9854

## ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### Զրույց հայրեցիքի հետ

էջ

Երգը . . . . .	5
Փարվել ես գու շիկնած հողին . . . . .	6
Իմ բնկերներին . . . . .	7
Ծննդավայր . . . . .	9
Հայրենիք . . . . .	11
Թողնեմ ես մի պահ . . . . .	13
Զյուռն . . . . .	15
Փայլում է ձյունի փաթիլը փոքրիկ . . . . .	18
Ոոհ գինվորի մասին . . . . .	19
Դասը . . . . .	21
Այդի ունես թե կանաչած . . . . .	23
Իմ հարազատներ . . . . .	24
1 Ասել ամեն ինչ հարթ է ու դյուրին . . . . .	24
2 Հաճախ այնպես հոգնում եմ ես . . . . .	26
Աչքի են բնկնում ճերմակ թելերը . . . . .	28
Առաջին բարեկամիս . . . . .	30
Փնտրում ես դու . . . . .	31
Ոոհ . . . . .	33
Հուշեր . . . . .	34
Բնանկար . . . . .	36
Մոսկվա պնամ . . . . .	38
Ոոսք երախտիքի . . . . .	40

## Մեզ սիրո մասին

Խոհեր սիրո մասին . . . . .	48
Աշուն է պազ, ծաղկել էս դու . . . . .	46
Սիրո ճամփան . . . . .	47
Երգ անվան մասին . . . . .	49
1 Առաջ անուն էիր սովոր . . . . .	49
2 Այնքան լավ է իմ անունը . . . . .	50
Գարնանամուտ . . . . .	51
Լավ են մարդիկ իմ աշխարհում . . . . .	53
Դու երջանիկ ապրես կյանքում . . . . .	54
Քամին ունում է մոլեգնած . . . . .	55
Իմ Մասիսի նման բարձր . . . . .	57
Առաջին ձյունը . . . . .	59
Թողած ես դրսի հոգսերն առօրյա . . . . .	61
Հոգնած եմ . . . . .	63
Կյանք ու սեր բառը ի՞նչ համար մեկ է . . . . .	65
Ես սիրում եմ քեզ իմ աշխարհի հետ . . . . .	66
Ասում են թե . . . . .	68
Ո՛ւմ ես որոնում այդպես մտահույզ . . . . .	69
Հիշեցի ես մի օր քեզ . . . . .	70
Նորից հագնեմ սիրուն շորեր . . . . .	71
Ասում են ինձ, որ ես շուտ եմ . . . . .	72
Սուտ կլինի եթե ասեմ . . . . .	74
Ամառնամուտ . . . . .	75
Ձեռ հասկանում, չեռ հասկանում . . . . .	77
Մեր սերը . . . . .	78

## Մրգաւաճի կարոտ

Ժողով մասրենու տակ . . . . .	85
Սիրուն Սոնա . . . . .	88
Էն չար տղեն հարեանի . . . . .	92
Նամակ ֆերմայից . . . . .	94
Կարոտի երգեր . . . . .	96

1 Էն սև սիրով, սև կարտով	96
2 Կղա հիմա իմ սիրելին	98
Ցորենհատիկ	100
Բարսեղ պասլի ելույթը	102
Չտեսնված որսկանը	104
Մրգաշատի աղջիկներին	107
Զրույց	109
Տասը որդի ունի Չանին	111

### Երգ Երևանին

Երկիր Հայրենի	115
Հողը	117
Փշատենի	118
1 Երգ Երևանին	130
2 Քարտեզի առաջ	123
3 Ցայտաղբյուրներ փոքրիկ	124
Նայում եմ շենքերին	125
Արագի ափին	127
Դեղձենի	129
Կոմիտասին	130
1 Այս խաղիկներում, որ դով են ու տաք	130
2 Որքան ուրախ լինեմ, որքան	131
Ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանին	132
Որդուս	133
Օրոր	135
Գիշերերգ	139
Երևանի ամառը	141
Դեպի Լենինյան հրապարակը մեր	143
Խաղողի վազ	145
Աշնանամուտ	147
Աշունը Երևանում	148

### Երևանի շուկան

Շաղում է, շողում	151
------------------	-----

Խմբագիր՝ Ս. Տարոնցի  
Նկարիչ՝ Ա.Ն. Գասպարյան  
Տեխ. խմբագիր՝ Վ. Կոստանդյան  
Կոնտրոլ սրբագրիչ՝ Լ. Գասպարյան

ՎՖ 10337: Պատվեր 1307: Տիրած 3000:  
Հանձնված է արտագրության 22/XII 1953 թ.:  
Ստորագրված է տպագրության 3/V 1954 թ.:  
Թուղթ՝ 70 x 92  $1/32$ : տպագր. 5,0 մա.մ., հրատ. 3,7 մա.մ.:  
Գինը կազմով 3 ռ. 35 կոպ.:

---

Հայպոլիգրաֆհրատի № 6 տպարան, Երևան,  
Լենինի սրգոտա № 51, 1954 թ.: